

# Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am



## Ձմեռային գորակոչ. Սյունիքն իր գավակներին ճանապարհեց հայոց բանակ

Սյունիքի տարածքային զինկոմիսարիատում մարդիկ հավաքվել էին ճանապարհելու իրենց որդիներին հայոց

բանակ: Լորակոչիկների հարազատները թեև հուզված, բայց հպարտությամբ էին ճանապարհում իրենց գավակներին՝ վստահ լինելով՝

արժանապատվորեն ծառայելու են, պատվով տուն են դառնալու:

Շարունակությունը՝ էջ 8

## Հայաստանի ճանապարհը դեպի վերականգնվող էներգետիկա և տնտեսական առաջընթաց

Ներկայացնում ենք Հայաստանի հանքագործների և մետալուրգների միության նախագահ, Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Վարդան Ցիսկյանի հոդվածը, որում նա անդրադարձել է էներգետիկայի ոլորտին՝ որպես տնտեսագետ և բիզնես կառավարման մասնագետ:

Էներգետիկան Լորակոչի ժամանակաշրջանում մշտապես եղել է երկրների զարգացման անկյունաքարը: Դրանում կարող ենք համոզվել մի քանի պատմական և արդի անդրադարձների միջոցով:

19-րդ դարի Մեծ Բրիտանիայի օրինակը վկայում է, որ էներգետիկան է երկիրը դարձրել արդյունաբերական առաջատար ու աշխարհակալ գերտերություն: Աժխային էներգետիկան և շոգեշարժիչների զարգացումը հիմք դրեցին երկրի տնտեսական և ռազմական գերիշխանության համար: Որևէ երկրում արդյունաբերական հեղափոխությունը և այդ երկրի գերտերությունը դառնալը հնարավոր էր միայն էժան և մեծ քանակի սեփական էներգիայի հաշվին: Այդպես է նաև ԱՄՆ-ի դեպքում, որը 20-րդ դարում առաջ անցավ Բրիտանական կայսրությունից՝ դառնալով աշխարհի ամենահզոր գերտերությունը: ԱՄՆ-ում տեղի



ունեցավ նավթային և որպես դրա արդյունք՝ ներքին այրման շարժիչների հեղափոխությունը, որը երկրի ռազմական և տնտեսական հզորության հենասյունը դարձավ: Թեև թվում է, որ այսօր ԱՄՆ-ը կարծես կորցնում է այդ դերը Հինաստանի հետ մրցակցության մեջ,

ակնհայտ է, որ տնտեսական հեղափոխությունները չեն կարող լիարժեք լինել առանց էներգետիկ վերափոխման՝ այս անգամ կանաչ էներգետիկ հեղափոխության:

Շարունակությունը՝ էջ 9

Երբ մի ժողովուրդ վերելքի ու հաղթանակների փոխարեն անվերջ խոսում է վտանգի մասին, հասկացե՞ք, որ նա ոգեթափ է եղած: Ոգու պակասի արդյունք է մեր ժողովրդի օրվա հոգևոր անշարժունակությունը, նրա քաղաքական հոռետեսությունը, նրա կյանքի գոեհիկությունը, անհամերաշխությունը: Առողջ վիճակ չէ անկրոնությունը: Ով հեռանում է իր կրոնից, անձնասպանորեն կտրում է իր հոգևոր զարկերակը: Իր Արարչի դեմ գործողը պիտի չքաշվի գործել և իր նմանների դեմ: Կրոնը միայն արարածի և Արարչի հարաբերությունն է, այլև՝ մարդու և մարդու, անհատի և հավաքականության, անձի և ճշմարտության հարաբերություն: Նա, ով ընդունում է Աստծո գոյությունը, ընդունում է նաև իր պարտականությունը հանդեպ գերագույն իրականության՝ ազգ, Հայրենիք, պետություն:

ԳԱՐԵԳԻՆ ՆՄԴԵՅ

## Կառավարությունը հավանություն տվեց ԵՄ-ին Հայաստանի անդամակցության գործընթաց սկսելու մասին օրինագծին

Կառավարությունը դրական դիրքորոշում ունի «Եվրոպական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության գործընթացի մեկնարկի մասին» օրենքի նախագծի վերաբերյալ, որն Ազգային ժողով է ներկայացրել «Եվրաքվե» քաղաքացիական նախաձեռնությունը:

Կառավարության հունվարի 9-ի նիստում այս մասին ասաց ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը:

Միրզոյանն ընդգծեց Հայաստանի և Եվրոպական միության միջև վերջին տարիների ինտենսիվ և բովանդակալից համագործակցությունը, որը ներառել է քաղաքական, տնտեսական, ժողովրդավարական և անվտանգային ոլորտները:

«Հայաստանի Հանրապետությունը և Եվրոպական միությունը բավականին ինտենսիվ և դինամիկ հարաբերություններ են ունեցել, և այդ հարաբերություններն ունեցել են շատ հարուստ բովանդակություն և ընդգրկել են տարբեր ոլորտներ: Եվրոպական միությունը տարբեր առիթներով ընդգծված քաղաքական աջակցություն է հայտնել Հայաստանի ժողովրդավարությանը: Եվրոպական միությունը պատրաստակամություն է հայտնել և, ըստ էության, ներգրավվել է Հայաստանի Հանրապետության շուրջ անվտանգային միջավայրի ապահովմանը՝ նկատի ունենալով քաղաքացիական դիտորդական առաքելության տեղակայումը Հայաստանում: Եվրոպական միությունը նաև պատրաստակամություն է հայտնել աջակցել Հայաստանի տնտեսական դիմակայունության ամրապնդմանը: Ակնհայտ է, որ Եվրոպական միությունը և անդամ երկրները ունեն շատ հարուստ ժողովրդավարական ավանդույթներ, ուժեղ ժողովրդավարական ինստիտուտներ, ազատ ու մրցակցային միջավայր, արդիական տնտեսություն, առաջադեմ և զարգացած գիտություն»,- ընդգծեց

Շարունակությունը՝ էջ 9



# Հետադարձ հայացք. Չանգեզուրի պղնձամուլիբդենային ու օրեր շարունակ խաթարված էր աշխատանքը

**Փետրվարի 10-ի երեկոյան Չանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատը վերսկսեց աշխատանքը, որը դադարեցվել էր հունվարի 31-ին՝ հանքագործների մի մասի բողոքի ակցիայի և աշխատանքի չներկայանալու պատճառով:**

Սենք ողջունում ենք այդ իրողությունը, գնահատում կողմերի խոհեմությունն ու վճռակալությունը՝ վերջակետերու բացառապես վնասաբեր այդ իրավիճակը:

Արտադրության վերսկսումը, խոստովանենք, տեղի ունեցավ այն բանից հետո, երբ գլխավոր տնօրեն Ռոման Խուրդյին կիրակի երեկոյան առաջ քաշեց ընկերության՝ իրավիճակի կարգավորման իրատեսական և հավասարակշռված տեսլականը, որին հաջորդեց ձեռնարկվող միջոցառումների բովանդակության ու ժամանակացույցի հանրայնացումը:

Ընդ որում՝ աշխատավարձերի վերանայման քայլերը ենթադրում են միջին հաշվով 20 տոկոսով աշխատավարձի բյուջեի մեծացում, որի մեկնարկը, կարելի է ասել, տրված է:

Կոնկրետ քայլեր են նախատեսվում բժշկական ապահովագրության նորովի կազմակերպման, աշխատանքային պայմանների բարելավման ուղղությամբ:

Հանուն ճշմարտության պետք է փաստել՝ ընկերությունը լուծումների ավելի մարդակենտրոն և բազմակողմանի սկզբունքներ է առաջարկել, բան պահանջում էին իրենք՝ դժգոհող հանքագործները:

Գնահատելի է փաստը, որ հաշտեցման աշխատանքների վերսկսման գործընթացը գերծ է վարչական մեթոդների կիրառումից:

Անշուշտ, գնահատելի է նաև հանքագործների պահվածքը, որ ըմբռնումով մոտեցան ընկերության դիրքորոշմանը, վստահության նոր քվե տվեցին ընկերության սեփականատերերին ու գործադիր ղեկավարությանը՝ թույլ չտալով անորոշության հետագա խորացում:

\* \* \*

**Մի կարևոր հանգամանք. որբան էլ հանքագործների պահանջը գլխավորապես աշխատավարձի խնդրի շուրջ էր, այնուամենայնիվ, այն չէր կարող նման խորություն և մասշտաբ ընդունել, եթե դրան նպաստող գործոններ չլիներին բարոյահոգեբանական տիրույթում:**

Լեռնագործներն անվստահությամբ չէին վերաբերվի ընկերության պաշտոնական առաջարկություններին, եթե մինչ այդ շարքային հանքագործի և ղեկավար անձնակազմի միջև շփումների ավելի հստակ համակարգ գործեր:

Եթե նույնիսկ այդ ամենն ինչ-որ տեղից համակարգվում կամ ուղղորդվում էր, ապա դա նույնպես հաջողություն չէր ունենա, եթե դրա համար պարտադիր էր չլիներ:

**Եզրակացություն՝** ընկերության ղեկավարությունը և արհմիութենական կազ-

մակերպությունը պետք է նորովի մոտենան մարդկանց հետ հարաբերվելու, նրանց մտահոգությունները լսելու խնդիրն, կարողանան մշտապես զգալ կոլեկտիվի, աշխատանքային ամեն մի օղակի իրական բաբախյունը և իրավիճակին համահունչ քայլեր ձեռնարկել:

**Այսինքն՝ ներկուցելու մի միջավայր ձևավորելու խնդիր ունենք: Եվ հաճելի է տեսնել, որ ընկերության գլխավոր տնօրենն այդ ուղղությամբ նույնպես գործնական քայլեր է նախատեսում:**

\* \* \*

**Շտապենք հայտարարել՝ մենք չենք ուզում հավատալ, որ քաջարանյան իրադարձություններն ուղղորդվում կամ համակարգվում էին մայրաքաղաքից, ինչի մասին խոսում և գրում էին շատերը:**

Եվ, այդ ամենով հանդերձ, կուզենայինք անդրադառնալ մայրաքաղաքից հնչած երկու դիրքորոշման:

Եվրոպամետների փաղանգի ներկայացուցիչ Արման Բաբաջանյան անուն-ազանունով անձնավորությունը գրեց, թե՛ «*Հի կարելի բացատրել, որ կոմբինատի ճգնաժամը կարող է լինել ուղղորդված գործընթաց՝ տնտեսական քայքայման միջոցով Հայաստանի դիրքերը թուլացնելու համար: Պատմության ընթացքում նման մեխանիզմներ կիրառվել են տարբեր երկրներում... որոնք նպատակ ունեն ոչ միայն վնասել տնտեսությանը, այլև ազդել ներքաղաքական կայունության վրա:*»

Թեև Արման Բաբաջանյանին Սյունիքում գրեթե չեն ճանաչում և նրա խոսքն այստեղ առանձնապես կշիռ չունի, բայց բարոյական կլինեք, որ հարգելի պարոնը փակագծերը բացեք՝ այդ որտեղից և ովքեր են ուզում քաջարանյան գործընթացով թուլացնել Հայաստանի դիրքերը:

Ոչ պակաս ուշագրավ էր «Հանրապետություն» կուսակցության նախագահ Արամ Չ. Սարգսյանի դիրքորոշումը:

**Ի՞նչ էր ասում պարոն Սարգսյանը:**

ա) «*Ես բազմիցս առաջարկել եմ ՀՀ իշխանությանը՝ լիցենզիա տալ ամերիկյան, ֆրանսիական ընկերության. այդ մրցակցությանը «Գեոպրոմայնինգը», որի կազմում է 2ՊՄԿ-ն, չի դիմանա:*»

բ) «*Քաջարանը կարող է տարեկան 1 մլն տոննա խտանյութ արտադրել, բայց ռուսական ընկերությունը շահագործում է հանքավայրի հնարավորությունների հինգ տոկոսը, գետի հունը պետք է տեղափոխվի, գերեզմանները պետք է պետությունը տեղափոխի, որ ամբողջությամբ հանքավայրը շահագործվի, միևնույն ռուսական ընկերությունը ձախ ափը վերցնելու լիցենզիա չի պահանջում:*»

Սպարապետի եզրոր հանդեպ հարգանք ունենալով հանդերձ, այդուամենայնիվ չենք կարող չասել՝ պարոն Սարգսյան, ձեր գնահատականները սիրողական բնույթի են, իրականության հետ աղերս չունեցող: Ավելին՝ գուտ տնտեսական կնճռի փորձում եք բաղաբա-

կան-կուսակցական փաթեթավորում տալ, որը մերժելի է և անտրամաբանական:

Սյունիքը տարիներով պայքարել է, որ Ողջի գետի ձախ ափը շատ չափավոր և գգուշորեն օգտագործվի, որպեսզի հազարամյակներով գոյություն ունեցած Քաջարանը գյուղը չվերանա հողի երեսից: Իսկ Դուք նույնիսկ գերեզմանները տեղափոխելու մտքեր եք փայփայում:

Կամ՝ բննադատում եք, թե հանքավայրի հինգ տոկոսն է միայն շահագործվում՝ ավելի շատ շահագործելու փոխարեն: Մի՞թե վատ է, որ հանքավայրի քիչ մասն է շահագործվում: Ի՞նչ եք ուզում՝ մտածենք այստեղից հանդերձի մասին և գալիք սերունդներին ոչինչ չթողնենք:

Կամ՝ ասում եք՝ 2ՊՄԿ-ն և Կապանի կոմբինատը «Գեոպրոմայնինգի» կազմում են: Ճիշտ չեք ասում...

**Չէր կարելի չտեսնել, թե քաջարանյան իրադարձություններն ինչպիսի ակտիվությամբ էր լուսաբանում (միակողմանիորեն) «Ազատություն» ռադիոկայանը: Այն ռադիոկայանը, որն օրեր առաջ իրապարակեց իբր գաղտնագրեծված տեղեկություններ 1999 թ. հայ-ադրբեջանական բանակցությունների մասին, որի ընթացքում բնարկվել է Հեյդար Ալիևի առաջարկությունը՝ Մեղրու տարածքն Արցախի հետ փոխանակելու հարցը:**

Քաջարանյան իրադարձությունները կեղծ լուսի տակ մեկնաբանեցին նաև հակահայկականությամբ վաղուց տառապող այլ լուսավարականներ նույնպես:

Եվ այս կարգի ելույթներով ու իրապարկումներով փորձ է արվում Սյունիքը ներքաշել կուսակցական-քաղաքական խաղերի մեջ, ջուր լցնել հակառակակողմանի ջրաղացին, երկրամասը նոր փորձություն ենթարկել:

Սփոփիչ է մի հանգամանք՝ Սյունիքում վաղուց լուրջ չեն ընդունում Երևանից, այն էլ այս կամ այն կուսակցականի շուրթերից հնչող հորդորները:

**Իսկ եթե սյունիքյան իրավիճակն իսկապես հետաքրքրում է այս կամ այն կուսակցական կամ պետական գործչին, ապա եկեք բնարկելու գլխավոր հարցը՝ ինչպե՞ս վերադարձնենք Սյունիքից բռնազավթված տարածքները:**

\* \* \*

**Տասն օրվա ընթացքում ականատես եղանակ իրողությունների, որոնք, մեղմ ասած, բացատրելի չեն:**

Օրինակ, երկրի օրվա իշխանությունը որդեգրել էր դիտորդի կարգավիճակ:

Եվ դա այն դեպքում, երբ կառավարությունը կոմբինատի բաժնեմասերի մոտ 22 տոկոսի սեփականատերն է և պարտավոր էր, գոնե այդ փաստի թելադրությամբ, հստակ ու գործնական դիրքորոշում որդեգրեր:

Եվ դա այն դեպքում, երբ ընկերությունը տարիներ շարունակ երկրի թիվ մեկ հար-

կատուն է ու մեր (այնքան էլ ոչ կենսունակ) տնտեսության լոկոմոտիվներից մեկը:

Եվ դա այն դեպքում, երբ կոմբինատի կանգը խորացնում էր Սյունիքի մարզի՝ առանց այդ էլ անորոշությամբ պարուրված վիճակը:

Հասկանալի չէր ՀՀ Էկոնոմիկայի նախարարի խոսքը՝ «*Ես կարծում եմ՝ դա արհմիության և հանքարդյունաբերության համալիրի աշխատակիցների տիրույթում գտնվող հարց է:*»:

Վերստին ակնհայտ դարձավ Սյունիքի մարզպետարանի, սյունեցի խորհրդարանականների անկարողությունը՝ առերեսվելու իրականությանը կամ արտահայտելու սեփական կարծիք տեղի ունեցող իրադարձությունների առնչությամբ:

Գոնե ուշացումով կոմբինատ այցելեցին ԱԺ պատգամավորներ Արմեն Խաչատրյանը, Նարեկ Ղահրամանյանը, ինչպես և Մարդու իրավունքների պաշտպանը, թեև այդ այցելությունները ոչ միանշանակ ընդունվեցին:

Դրվատելի են Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի ղեկավարության այցը կոմբինատ և գործադրած ջանքերը՝ ստեղծված վիճակից ընկերությունը դուրս բերելու ուղղությամբ:

\* \* \*

**Հարկ ենք համարում շեշտել՝ Քաջարանում տեղի ունեցած վերաբերում էր և է բողոքիս, անկախ այն բանից՝ Քաջարանում ենք բնակվում, թե՛ ոչ: Կամ՝ 2ՊՄԿ-ում ենք աշխատում, թե՛ ոչ:**

Այլ կերպ ասած՝ ընդերքը երկրի սեփականությունն է, համաժողովրդական սեփականությունն է, և ընդերքի խելամիտ ու արդյունավետ օգտագործումն է մեր պետական գանձարանի համալրման կարևոր աղբյուրներից մեկը:

Ուրեմն և՛ հասկանալ կարելի է Սյունիքին (և ոչ միայն) համակած անհանգստությունը՝ մարզի խոշորագույն գործատու ձեռնարկությունում ստեղծված վիճակից բխող:

Գնահատելի է, որ և՛ ընկերության ղեկավարությունը, և՛ հանքագործների մեծամասնությունը, և՛ Քաջարան համայնքի բնակիչները կարողացան տեսնել-կանխատեսել, թե ինչ հետևանքներ կարող էր ունենալ վնասաբեր այն գործընթացը, որ մեկնարկել էր հունվարի 31-ին:

■ Նախ՝ ընկերությունն օրական կրում էր մոտ 400 մլն դրամի վնաս, իսկ պետությունը մուտքերը պակասում էին 100 մլն դրամի չափով: Պատկերացնել կարելի է, թե ինչ խնդիրներ կառաջանային պետական բյուջեում՝ աշխատանքները չվերսկսելու պարագայում:

■ Մեծ հարված կհասցվեր երկրի ներդրումային գրավչությանը, տնտեսական զարգացման հեռանկարային ծրագրերին:

■ Մեծ հարված կհասցվեր Սյունիքի կենսունակությանն ու դիմադրողականությանը, իսկ Սյունիքով պայմանավորված է (ևս մեկ անգամ հիշեցնենք) Հայաստանի Հանրապետության և՛ լիներաբույսերը, և՛ պետականությունն ու ինքնիշխանությունը, և՛ անվտանգությունը:

Չմոռանալե՛ք՝ օրեցօր ավելի է թեժանում աշխարհաքաղաքական պայքարը Սյունիքի շուրջ, իսկ իրավիճակի ապակայունացումն ավելի կբացեր Ադրբեջանի ախորժակը, որը չի էլ թաքցնում իր ցնորական նկրտումները Սյունիքի հանդեպ:

■ Կլորճատվելին 4600 հանքագործի և արբանյակ ձեռնարկությունների հազարավոր աշխատակիցների եկամուտները, կիսաթարվելին մի շարք ձեռնարկությունների աշխատանքները:

■ Ի վերջո դա ուժգին հարված կլիներ հայրենի մեր պետության՝ առանց այդ էլ երերող հեղինակությանը, որը, անտարակույս, կօգտագործվեր ոչ բարեկամ երկրների կողմից:

Ուրեմն և՛ երիցս հարգանք բոլոր նրանց և հատկապես ընկերության ղեկավարությանը, որ երկրամասը հետ պահեցին նոր խառնաշփոթից ու փորձությունից, որ մեր պետական ընթացքի ճանապարհին նոր խոչընդոտներ չստեղծեցին:

Եվ, այդ բոլորով հանդերձ, եկել է տեղի ունեցածից դասեր քաղելու, ինչ-ինչ հարցեր վերագնահատելու, վերաբժանորդելու ժամանակը...

**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

# Կապանում ուսումնասիրվել է համայնքի ղեկավարի նկատմամբ վստահության մակարդակը. Գևորգ Փարսյանին վստահում է բնակիչների 85 տոկոսը

ՀՀ կառավարությունը նախաձեռնել է «Տեղական ինքնակառավարման և ապակենտրոնացման բարեփոխումներ» ծրագիրը, որն իրականացնում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը՝ ԱՄԸ Միջազգային զարգացման գործակալության ֆինանսական աջակցությամբ:

Ծրագրի նպատակը՝ ամրապնդել տեղական ինքնակառավարումը Հայաստանի Հանրապետությունում, աջակցել լիազորությունների ապակենտրոնացմանն ուղղված բարեփոխումներին:

Ծրագիրն իրականացվել է հանրապետության ութ համայնքում, այդ թվում՝ Կապանում, որտեղ հարցվել է 125 չափահաս քաղաքացի:

Syuniacyerkir.am կայքի և Syuniac Yerkir Newspaper ֆեյսբուքյան էջում իրապարակվում է հասարակական կարծիքի հետազոտության վրա հիմնված զեկույցը, որը հանրայնացվել է օրեր առաջ:

Եվ, այդուհանդերձ, կարևոր համարեցինք առանձին լույս սփռել ուսումնասիրության «ՏԻՄ-երի նկատմամբ բնակչության վստահության մակարդակը» ենթաբաժնի վրա, ավելի ստույգ՝ համայնքի ղեկավարի նկատմամբ բնակիչների վստահության մակարդակը:



մամբ բնակիչների վստահության մակարդակին:

Աղյուսակ 3-ի համաձայն՝ Կապան համայնքի ղեկավար Գևորգ Փարսյանին վստահում է համայնքի բնակիչների 85 տոկոսը, վստահում է մասամբ՝ 14 տոկոսը, չի վստահում մեկ տոկոսը:

Խոստովանենք՝ վստահության բավականին բարձր մակարդակ է, իսկ մեր օրերի համար, երբ իշխանավորների հանդեպ

վստահության համատարած ճգնաժամ է, գերազանց ցուցանիշ են հանրային կարծիքի ուսումնասիրման վերոբերյալ արդյունքները:

Անշուշտ, ողջունում ենք այդ փաստը, նաև հույս հայտնում, որ Կապան համայնքի ղեկավարի գործունեությունը հետապսու լույսաբան կընթանա այն հունով, որը օժտված կլինի կապանցիների և՛ վստահությամբ, և՛ աջակցությամբ:

14.01.2025



## ԶՊՄԿ-ն վերսկսել է աշխատանքը, գործադուլը դադարեցված է

ԶՊՄԿ բողոքի ակցիայի 11-րդ օրը գործադուլը դադարեցվել է. հաջողվել է ձեռք բերել պայմանավորվածություն՝ եղած բոլոր հարցերը կարգավորելու համար: Այս մասին իր ֆեյսբուքյան էջում ուղիղ եթերում հայտնել է ԶՊՄԿ գործադուլի համակարգող խորհրդի անդամ Վահե Մխիթարյանը:

Նա տեղեկացրել է, որ որոշում են կայացրել վերագործարկել ԶՊՄԿ-ն:

ԶՊՄԿ-ի աշխատավարձային ֆոնդը կավելանա միջինը 20%-ով, ասվում է ընկերության պաշտոնական հայտարարությունում:

Հունվարի 31-ից կոմբինատի աշխատակիցների մի մասը գործադուլ էր հայտարարել՝ պահանջելով աշխատանքային պայմանների բարելավում և աշխատավարձի բարձրացում: Տնօրենությունը գործադուլը չարտոնված է համարել, այնուամենայնիվ, ընդառաջ է գնացել աշխատակիցների պահանջին՝ բարելավելու աշխատանքային պայմանները: Նշվում է, որ կոմբինատի ղեկավարությունը, հանդես գալով որպես իր աշխատակիցների համար երաշխավոր, հաստատում է՝ փոփոխությունները կիրականացվեն սահմանված ժամկետներում:

## Սյունիքը ԶՊ-ական իր իշխանավորներից առավել բարձր է գնահատում ԱԺ պատգամավոր Դավիթ Դանիելյանի, ապա մարզպետ Ռոբերտ Ղուկասյանի գործունեությունը



2025 թ. հունվարի 20-25-ը «Սյունյաց երկիրը» մարզում անց է կացրել հանրային կարծիքի ուսումնասիրություն՝ նպատակ ունենալով պարզել Սյունիքի բնակիչների վերաբերմունքը ԶՊ-ական սյունեցի իշխանավորների (պաշտոնյաների) հանդեպ:

Հունվարի 25-ին ժամը 12:00-ին ավարտվել է գնահատման փուլը, իսկ հունվարի 27-ից իրականացվել է արդյունքների ամփոփում:

Ըստ վերջնահաշվարկի՝ հանրային կարծիքն ուսումնասիրելու մեր հայտարարությունը (syuniacyerkir.am կայքով և Syuniac Yerkir Newspaper ֆեյսբուքյան էջով) ընթերցել կամ դիտել է մոտ 70 հազար մարդ:

Երանցից գնահատումներ են արել և կարծիք հայտնել 5016 մարդ, այդ թվում՝ 4206-ը՝ ֆեյսբուքյան էջում գրառումներ կատարելով, 455-ը՝ էլեկտրոնային հասցեով, 355-ը՝ հեռախոսազանգով:

5016 գնահատումից 1547-ը կատարվել է խմբագրության սահմանած չափորոշիչների խախտմամբ, ուստիև համարվել է անվավեր: **Վավեր 3469 ձայնը բաշխվել է հետևյալ կերպ՝**  
Դավիթ Դանիելյան – 1757 (50,65%),  
Ռոբերտ Ղուկասյան – 1399 (40,33%),  
Կարեն Համբարձումյան -139 (4%),  
Արմեն Խաչատրյան -81 (2,33 %),  
Նարեկ Ղաիրամանյան -71 (2,05 %),  
Մարինա Ղազարյան - 19 (0,55 %),  
Հայկ Հարությունյան – 2 (0,06 %),  
Հովսեփ Առաքելյան -1 (0,03%):  
Քանի որ բոլորը (քիչ բացառությամբ)



գնահատվել են 5 բալով, ուստիև տրված միավորների գումարումն աննպատակահարմար է գտնվել:

Անվավեր համարվածների հիմնական պատճառը դրանց հեղինակների ոչ սյունիքաբնակ լինելն էր:

Ինչո՞ւ են հարցման մասնակիցները կենտրոնացել վերոնշյալ անձանց վրա. անշուշտ, դա հարցման մասնակիցների ընտրությունն է, կարող էին գնահատել նաև ԶՊ-ական մյուս պաշտոնյաների գործունեությունը՝ կրթօջախների, հիմնարկ-ձեռնարկությունների, կազմակերպությունների ղեկավարներից ու մյուս պաշտոնյաներից սկսած:

Ուսումնասիրության ընթացքում հնչեցին դիտարկումներ, թե հարցումը կարելի էր անցկացնել ավելի պարզ և տարածված եղանակով: Մենք, իհարկե, նման առաջարկությունների հեղինակների անկեղծ ձգտումը գնահատում ենք, սակայն այս կերպ ենք ընտրել՝ մի շարք պատճառներից ելնելով, ինչը տեղավորվում է ողջամտության, օբյեկտիվության և գիտականության տրամաբանության մեջ:

Ուսումնասիրության ընթացքին անդրադարձել են մայրաքաղաքային մի քանի լրատվամիջոցներ՝ նշելով, որ Սյունիքում իրականացվող հանրային կարծիքի ուսումնասիրման արդյունքում նկատելի է եղել վարչական ռետուրի կիրառումը, ինչը մասամբ հավաստվում է բլեթարկած անձանց ցուցակին ծանոթանալիս:  
Ուստի և կարող ենք փաստել՝ բազմաթիվ

դեպքերում բացակայել են ազատ կամարտահայտությունն ու անկեղծությունը:

Արդյունքների ամփոփումը կատարվել է խմբագրության՝ երեք հոգուց բաղկացած աշխատանքային խմբի կողմից:

Հրավիրել էինք նաև ԶՊ կուսակցության ներկայացուցչի, ինչպես և մեկական ներկայացուցիչ այն իշխանավորների, ովքեր գնահատվել են ուսումնասիրության ընթացքում: Սակայն որևէ ներկայացուցիչ չի գործուղվել խմբագրություն, ինչը գնահատում ենք իբրև վստահության արտահայտություն խմբագրության աշխատանքային խմբի հանդեպ:

Հարցման մասնակիցներին հնարավորություն էր տրվել նաև կարծիքներ հայտնել իրենց նախընտրած պաշտոնյաների մասին: Եվ մարդիկ օգտվեցին այդ հնարավորությունից:

Արտահայտված կարծիքների վերլուծությունը չենք կատարում: Ասենք միայն՝ արտահայտված կարծիքներն ավելի շատ վկայում են մեր նկարագրի և ոչ թե գնահատվող պաշտոնյաների մասին:

Քաղաքական-գաղափարական ի՞նչ չափանիշներով էին մասնակիցները գնահատում իշխանավորներին:

Բազմաթիվ սյունեցիներ անտրամաբանական էին համարում այն կուսակցության ներկայացուցիչներին դրական գնահատական տալը, որի իշխանության ընթացքում Սյունիքը անդամահատվել է, և խոսք չկա մարզի երբեմնի սահմանները վերականգնելու մասին: Ավելին՝ սյունեցի ԶՊ-ական պաշտոնյաները համակերպվել են Սյունիքի տարածքների մի մասի օկուպացված վիճակի հետ և վախենում են այդ մասին բարձրաձայնել, վախենում են խոսել այն սպառնալիքների մասին, որոնց դեմ հանդիման հայտնվել է Սյունիքը:

Հանրային կարծիքի վերաբերյալ դրական արձագանքներ ենք ստացել և՛ սոցիոլոգներից, և՛ քաղաքական գործիչներից, և՛ ԶՊ կուսակցության ներկայացուցիչներից. նրանք կարծում են, որ պարբերաբար պետք է իմանալ հանրության կարծիքը գործող իշխանավորների հանդեպ՝ դա համարելով ժողովրդավարության կարևոր բաղադրիչ:

\* \* \*

Ուսումնասիրության պատվիրատուն և նախաձեռնողը «Սյունյաց երկիր» պարբերականն էր:

Ուսումնասիրությունն իրականացվել է լիարժեք թափանցիկության պայմաններում:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, թե որքան պահանջված է գործող պաշտոնյաներին իրապարակավ ու հանրային կերպով գնահատելու մեր նախաձեռնությունը:

Վերստին շնորհակալություն ենք հայտնում Սյունիքի մարզի բնակչությանը՝ մեր ուսումնասիրության հանդեպ ցուցաբերած հետաքրքրության, ակտիվ մասնակցության և, իհարկե, «Սյունյաց երկիր» հանդեպ դրսևորած վստահության համար:

# Ժողովրդական վարպետը Գորիսից. Միհրան Միրումյան

Կենսախիղճ ժպիտով, կյանքով լեցուն Միհրան Միրումյանին հանդիպեցի Գորիսի Այոնյացի 135 հասցեում գտնվող իր երկհարկանի առանձնատանը, որը հեռվից աչքի էր զարնվում գորիսյան ավանդական գեղեցիկ «բարբաշ»-ով, որը, ինչպես հետագայում պարզվեց, տանտերը պատվիրել էր բարբաշի հմուտ վարպետներից մեկին («բարբաշը» դեպի փողոցն ուղղված առանձնատան բարերի շարվածքի միացման տեղում ցեմենտբետոնե գեղեցիկ, միանման սվաղն է, որը վարպետը սրտի նվիրումով է արել, «բարի սրտով բաշել է սվաղը, բարի-բաշ բարբաշ է արել»): Միհրանն ինձ ընդառաջ է գալիս, ուղեկցում երկրորդ հարկ, որի պատշգամբից գեղեցիկ տեսարան է բացվում: Աչքիդ առաջ սփռված են գույնզգույն ծաղիկներ, խնամքով մշակված են փարթամ այգու ամեն ծառ ու թուփ, որոնք ասես ուրախությունից իրար ակնաչի բախում են իրենց բարի տիրոջ մասին...

Փայտափորագրող Միհրան Պողոսյանը ժողովրդական ասացվածքների ու հայ գորգների ստեղծագործությունների թեմաներով փայտից գեղեցիկ աշխատանքների հեղինակ է: «Աղվեսը երկու ոտքով է թակարդն ընկնում», «Յագարան բլբուլ», «Սիրո հովանավոր», «Աբու Լալա Մահարի», «Չարթոնք»: Ստեղծագործություններում հատուկ տեղ ունի կինը՝ «Եվ ի՞նչ է կինը», «Կինն ու սատանան», «Ծաղիկ և կին»... Պատրաստել է հայկական բարդ նախշերով ու դրվագազարդերով բազմաթիվ ճաշատեղաններ, գրասեղաններ, ջահեր, լուսամուկներ, մոմակալներ, մրգամաններ, ծաղկամաններ, կոկոններ, ծաղիկներ, կենդանիներ՝ փիղ, ուղտ, ավանակ, աղվես, արծիվ, տրիմոներ (գաղղասեղան), մահճակալներ, պրեժերասի սեղաններ, բազկաթոռներ, նուռ, խաղողի ողկույցներ, տերևներ, սեղանի ու պատի ժամացույցներ, գինու, օղու և կոնյակի շշերի դեկորատիվ պատյաններ, նկարի շրջանակներ, առանձնատների դարպասներ, մուտքի դռներ, գահ, դժոխքի, դրախտի խորհրդանիշներ, եկեղեցու դուռ, եղջերուի եղջյուրից մրգաման, մարդկային կերպարներով շախմատի ֆիգուրներ, հայ թագավորների, զորավարների, ֆիդայիների կերպարներ՝ Անդրանիկ, Գրո, Լճոճե...

Լուսահոգի հոր գերեզմանի տուֆակերտ հսկա խաչքարի հեղինակն է: 2016 թվականին ժողովրդական վարպետի կոչում է ստացել:

Միհրանը տեղյակ էր մեր զրույցի թեմայի՝ հեղինակի փայտի փորագրման արվեստի, արվեստագետի կենսագրության, ստեղծագործական կերպարի բացահայտման մասին: Բայց առանց հարցադրման հիշում է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ուսանողական տարիներից մի դրվագ, որը վկայում է բնատուր շնորհքով օժտված արվեստագետի ստեղծագործական համարձակության մասին:

– 1969 թ. Նոյեմբերի 7-ի անձրևոտ օրը, ուսանողական և դասախոսական կազմով նախապատրաստվում էինք Յոկոնդայի հեղափոխության օրվան նվիրված շքերթին: Կանգնած էինք Կառավարության շենքի մոտ, որտեղից պետք է շարքով հանդիսավորապես անցնեինք Լենինի՝ ներկայիս Յանապետության հրապարակով: Մեր ֆակուլտետի ղեկավար տեղատարափ անձրևի տակ ամուր բռնել էր ցուցապատառներից մեկի փայտի մի կտորից, իսկ լողունգի մյուս ծայրն ընկած էր գետնին. այն բռնողն «անհետացել էր»: Այդ պահին դեկանի հույսը կարծես ես էի՝ ինստիտուտում ակտիվ ուսանողի համբավ ունեի: Խնդրեց շտապ գտնել մեկին, ով լողունգը կբռներ: Արագ գտա, ամեն ինչ լավ անցավ: Յերթական պատի թերթի թեման այդ տիպի միջադեպն էր ու իմ ծաղրանկարը, որում անձրևի տակ թռչվող շքերթի մասնակից ուսանողներն էինք և մեր դեկանը: Մնացածն ինչպես իրականում՝ նա բռնել էր լողունգը, որի մյուս ծայրն ընկած էր գետնին... Նկարի համար ոչ թե պատժվեցի, այլ պարգևատրվեցի կոմերիտ-միության պատվոգրով: Այն ինձ ճանաչում բերեց պոլիտեխնիկական ինստիտուտում...

– Մեր քաղաքում բոլորը բեզ վարպետ Միհրան են ասում: Մարդիկ բեզ տեսնում են հաստոցի մոտ փայտե աշխատանքներ կատարելիս: Ապա երբ տեսնում են ձեռքի էլեկտրական փոքրիկ հատուկ գործիքով շաքաթներ տևած թո տընաչան աշխատանքի վերջնական արդյունքը, համարում են արվեստի գործ և հիացական խոսքեր ասում: Գործը անում ես սիրով ու նվիրումով: Չես զլանում թո արվեստի գաղտնիքները կիսել փայտափորագրման մեջ խորամուխ լինող մարդկանց հետ, որոնց հնարավորություն ես տալիս մոտիկից հետևել աշխատանքներիդ՝ անձնակ հումքի նախապատրաստությունից մինչև ավարտուն գործ:

Փայտափորագրված ստեղծագործություններից անվանացանկը մեծ է՝ առանց արհեստական գուևակորման ընկուզենու, բալենու, թթենու կոճղի կամ միջուկի կարմիր, դեղին, մուգ դարչնագույն փայտե հուշանվերային կոնյակի շշերի պատյաններից մինչև հայկական ժողովրդական հեթիաթների, առակների մոտիվներով մարդկանց ու կենդանիների կերպարներ, հայ բանաստեղծների ստեղծագործությունների թևավոր խոսքեր դարձած նշանավոր տողերով փայտե հարթաթանդակներ, գորո, երգիչ, զորավար... Ահա, այդ մասին պիտի խոսենք...

– 1951-61 թթ. սովորել եմ Գորիսի Ակսել Բակունցի անվան 1-ին միջնակարգ դպրոցում: Սիրում էի բոլոր բնագիտական առարկաները, հատկապես քիմիան, որն ինձ համար կարծես արկածային մի աշխարհ էր՝ «ինչից ինչ կարող է առաջանալ»: Դպրոցում ստացած



գիտելիքներս բացեցին աչքերս՝ մարդը կարող է բնության մեջ աննշան թվացող ինչ-որ բան վերցնել, վերափոխել, դարձնել մարդու աչքը շոյող որևէ կատարյալ բան՝ անհրաժեշտ կենցաղային իր, գեղագիտական հաճույք պատճառող հուշանվեր, էսթետիկական նշանակության առարկա... Արվեստին առնչվող իմ երկու նորարարությունը հենց դպրոցական տարիների ծնունդ են՝ կաղապարի միջոցով կենդանու դիմակի պատրաստումն ու արձանի կտորած մատի վերականգնումը:

Նոր տարվա նախօրյակին բակի երեխաներով դիմակներ էինք պատրաստում, ծաղրածուի, ձմեռ պապի շորեր հագնում, ոչխարի կաշին ձգում մետաղե շրջանակի վրա, որը մեր կոպակների հարվածներից դրոշում էր: Բոլորի դիմակները սովորաբար էինք Ուզում էի, որ իմն ամբողջովին տարբերվեր: Կավից արջի դեմք բանդակեցի, որը լավ չորանալուց հետո դիմակի համար որպես կաղապար ծառայեց: Տան հին ասագրերի թերթե-



րը ստանձով մի բանի շերտով կպցրի, դարձավ արջի դեմքով ամուր դիմակ: Այն ես էի կրում: Բակունց ճանաչվեցի որպես կավից բանդակ ստեղծող, կաղապարից դիմակ սարքող տղա: Երբ 9-րդ դասարանում էի, Մուշեղ Զյարունցի մասից հետո դպրոցի Նոր տնօրեն նշանակվեց Ռուբեն Գիշունցը:

Դպրոցի միջանցքում դրված էր Ստալինի 2,5 մ բարձրությամբ ցեմենտբետոնե արձանը, որը կանգուն էր իմ՝ դպրոցում սովորելու ողջ տարիներին՝ 1951-61 թթ.: Ճառ ասող առաջնորդի աջ ձեռքը պարզած էր առաջ՝ դեպի վեր, ձախը՝ իջեցված ներքև: Չորս մատներն ամուր սեղմված էին, իսկ բութ մատը՝ բացված: Արձանի բութ մատը վաղուց չկար՝ հետաքրքրասեր աշակերտները դասամիջոցներին թաքուն իրենց ուժն էին փորձել... «Ինչ զնով լինի, պետք է այդ մատը վերականգնել»: Այսպես մտածելուս համար երկու պատճառ կար: Ընկեր Գիշունցը, ով նաև մեզ պատմություն էր դասավանդում, քիչ էր մտնում ինձ թողնելու նույն դասարանում: Բոլոր առարկաները գերազանց էի սովորում, իսկ պատմության երեսը տեսնել չէի ուզում: Պետք էր շինարարական ջոկատից ազատվել ու արձակուրդի մնացած ամիսներին Ստալինի արձանի կտորած մատը վերականգնել: Այդպես էլ եղավ: Երբ մատը պատրաստեցի, բոլորը հավանեցին: Դպրոցում ճանաչում ձեռք բերեցի:

Նկարչության ժամերին պլաստիլինից, կավից պարզ իրեր էի պատրաստում, ինքնուրույն սովորում նկարչության, բանդակագործության գաղտնիքները: Տուշով, մատիտով էսքիզներ էի անում, ջրաներկով, գուաշով՝ բնանկար, նատյուրմորտ: Յետաքրքրվում էի արվեստի տարբեր ճյուղերով: Ընթերցում էի նշանավոր նկարիչների, բանդակագործների մասին գեղարվեստական և ինժեներական միտքը կատարելագործող հանրամատչելի գրականություն:

Որպես արվեստագետ ձևավորվեցի մեծահամբավ նկարիչ Գևորգ Պարոնյանի դասավանդման մեթոդներով: Նա մեր նկարչության ուսուցիչն էր:

Յետագայում ընդունվեցի Կարլ Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի քիմ-տեխնոլոգիական ֆակուլտետ:

Ինստիտուտում ակտիվ էի, նկարում էի, փայտափորագրում: Իմ ստեղծագործական կյանքի բեկումը կարելի է համարել «Լաիրի» կինոթատրոնում դիտած «Գիշերային փոքրիկ սերենադ» իտալական ֆիլմը, որի գլխավոր հերոսը համաշխարհային տեսնող Մարիո Լանցան էր: Ֆիլմում նա սիրահարվում է մի աղջկա, ով խլացել էր: Շատ երկրներում մասնագետներ փնտրեց և, ի վերջո, բուժեց սիրած աղջկան: Բուժումից հետո Մարիոն պետք է մեծ բեմում երգեր, իսկ սիրելին՝ լսեր

և դաիլիճից բեմում երգող սիրած տղամարդուն ապացուցեր, որ լսում է: Մարիո Լանցան երգում է «Ալեկ Մարիա»: Կինոդաիլիճում նրան քարացած լսում է հանդիսատեսը: Աղջիկը շրջվում է, ասում «էլի երգիր»... Մեկ-երկու օր անց, հետաքրքիր զուգարկությամբ, «Լաիրի» կինոթատրոնից դեպի Օպերայի շենք իջնելիս, ձայնակալառակի խանութի աշխատակիցը բարձր միացրել էր ինձ ցնցած նույն երգի նույն երգը: Իսկույն այն գնեցի: Եվ ձայնակալառակն այնքան լսեցի, որ սիրեցի ջուրթակը: Այնքան սիրեցի, որ մի օր փայտից ջուրթակ պատրաստեցի: Յետագայում ապագա կնոջս հանդես սերս ստիպեց այն ավարտին հասցնել: Ավելացրի ջուրթակահարի դասական սիմվոլը՝ ֆրակով մորեխը: Խենթ սիրահարս այն նվիրեց սիրած աղջկան...

Յետագայում փայտափորագրությունը կլանեց ինձ...

1970 թ. ինստիտուտն ավարտելուց հետո աշխատել եմ տարբեր տեղերում, այդ թվում՝ Գորիսի, ապա՝ Շինուհայրի ռետինե կոշիկների գործարանի գլխավոր ինժեներ: Չնայած բարձր պաշտոնիս, ուշքս ու միտքս փայտափորագրությունն էր: Առաջին գործս՝ նշանավոր ջուրթակ ու ֆրակով ջուրթակահար մորեխս ինձ հանգիստ չէին տալիս:

Գործարանում մամլիչ-կաղապարների պատրաստման ժամանակ օգտագործվում էր բոր մեքենա: Այն շատ հարմար է փայտի վրա փորագրություններ կատարելու համար: Երբ տնօրենը նախկին բոր մեքենան՝ մաշված լիճելու պատճառով, դուրս գրեց ու նվիրեց ինձ, ուրախությանս չափ չկար: Սկսեցի լրջորեն փայտափորագրությամբ զբաղվել... Ծեծում էի, նկարներ հանում: Ընկուզենու փայտից լավ գրաֆիկական գործեր էին ստացվում: Սկզբից ջահեր էի պատրաստում: Ներքևում արվեստանոցում, աղջիկս եկավ, տեսավ ջահի բանդակից մի կտոր. 40 տարի առաջ էի արել, օգել նկուղ: Յիմն կա:

Վերիշենից Լևոն հորեղբորս տանը՝ մի հավաքի ժամանակ, եղել է այս խոսակցությունը: Լևոնի փեսան՝ քարտաշ Արմոն, գերեզմանաքարերին գրանիտի վրա նկար էր ծեծում: Նրան ասացի.

– Ես էլ կարող եմ դա անել:  
– «Պաբեդիտ» ասել ունե՞ս:

Ես չգիտեի, որ քար ծեծելու համար դա անհրաժեշտ է, առաջին անգամ էի լսում, բայց ասացի.

Ունեմ:

Մի փոքր գրանիտի կտոր կտամ ու մի փոքրիկ նկար: Դու էլ նկարը հանիր, տեսնեմ կարո՞ղ ես, թե ոչ:

Քառակուսիների մեթոդով այդ փոքր նկարի մասշտաբը մի բանի անգամ մեծացրի, շատ դժվարությամբ ծեծած նկարս

# Գնահատանքի խոսք՝ Գրիշա Մանուկարյանի 100-ամյա տարեդարձին

2025թ. հունվարի 15-ին լրացավ իր ժամանակի հայաստանյան գրական իրականության մեջ բավականին ճանաչված, երջանկահիշատակ բանաստեղծ Գրիշա Մանուկարյանի ծննդյան 100-րդ տարեդարձը, ով իր մահկանացուն կնքեց վաթսուներկու տարին չլրացած՝ 1986 թվականի նոյեմբերի 5-ին:

Արմատներով ևս Գրիշայի տարածաշրջանի Կյորու (հետագայում անվանափոխված՝ Ձորաշեն) գյուղից էր: Գրիշա Մանուկարյանը դարձել է հաճախել իր հայրենի գյուղում: Այդ տարիներին Խորհրդային Չորստանում դպրոցները հիմնականում 7-ամյա էին: Գերազանց գնահատականներով յոթերորդ դասարանն ավարտելուց հետո ուսումնառությունը շարունակում է Գրիշայի մանկավարժական ուսումնարանում: Ուսումնարանն ավարտելու պահին արդեն գորակույցում տարիքում էր: Եվ քանի որ Խորհրդային Միությունը Ֆաշիստական Գերմանիայի հետ պատերազմի մեջ էր՝ 1943թ. գորակույցում է խորհրդային բանակ և որպես շարքային զինվոր անմիջապես մեկնում ռազմաճակատ:

Ռազմական գործողություններում Գրիշա Մանուկարյանը կարողանում է ընդգծված մարտական ընդունակություններ դրսևորել, որի արդյունքում, կարճ ժամանակ անց, նրան կրտսեր լեյտենանտի սպայական կոչում է շնորհվում:

Չայրենական մեծ պատերազմին Գրիշա Մանուկարյանը մասնակցում է մինչև 1944թ. ավարտը, քանի որ Լեհաստանում ևս երկրորդ անգամ վիրավորվում է և հոսպիտալացվում: Այս անգամ իր ստացած ծանր վիրավորումից մինչև ապաքինվում էր՝ Ֆաշիստական Գերմանիան 1945թ. մայիսի 8-ին արդեն ստորագրած է լինում իր կապիտուլյացիան:

Ձորաշենից հետո ընդունվում է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը և 1952թ. ավարտում այն: Համալսարանն ավարտելուց հետո նրան գործուղում են Կրասնոդարի մարզի Անապա քաղաք, որտեղ աշխատում է կրթության բնագավառում՝ որպես տեսուչ: Իսկ 1954թ. վերադառնում է Չայաստան և աշխատանքի անցնում Գրիշայի տարածաշրջանի Հարժիս գյուղում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: Հարժիսում աշխատելուց հետո Գրիշա Մանուկարյանը որոշակի ժամանակահատված աշխատել է ևս և Խնձորենի միջնակարգ դպրոցում՝ դասավանդելով հայոց լեզու և գրականություն:

Այնուհետև՝ 1957 թվականին, Գրիշայի շրջանային կուսակցական կոմիտեի երաշխավորմամբ ստանձնում է իր հայրենի գյուղի՝ Ձորաշենի դպրոցի տնօրենի պաշտոնը և պաշտոնավարում մինչև 1972 թվականը:

Իսկ երբ Ձորաշեն, Ազատաշեն և Այգեձոր գյուղերը միացվեցին ու այդ գյուղերի բնակիչներով Հարթաշեն անվանվեց նոր գյուղ հիմնվեց, իշխանությունները Գրիշա Մանուկարյանին վստահեցին այդ նոր գյուղում գործող միջնակարգ դպրոցի տնօրենի պարտականությունները: Եւ Հարթաշենի դպրոցում պաշտոնա-



վարեց մինչև 1978 թվականը: Աներկբայելի է, որ մարդու աշխարհընկալման խորությունն ու լայնահունությունը, գեղարվեստական ճաշակը, գեղագիտական հայացքների որակները կրթությամբ են ձեռք բերվում, և յուրաքանչյուր բանաստեղծ անհատ, կյանքի ճանաչողությանը համընթաց, իր նախասիրություններին տուրք տալով՝ ձևավորում է իր աշխարհայացքը: Բայց միայն կրթությամբ և կյանքի փորձառությամբ աշխարհում դեռ ոչ ոք բանաստեղծ չի դարձել: Ի վերուստ տրված ստեղծագործելու այդ բացառիկ մարդկային ունակությունը բանաստեղծ անհատներն են զվից են ժառանգած լինում...

Գրիշա Մանուկարյանին բնությունն առատաձեռնորեն օժտել էր կյանքը պատկերներով ընկալելու և էպիկական շնչով այն չափածո ներկայացնելու աստվածատուր ձիրքով: Սակայն ցավալիորեն պիտի արձանագրել, որ համալսարանական տարիներին հանրապետական թերթերում հաճախակի տպագրվող, մայրաքաղաքային գրական շրջանակներին բավականին հայտնի, խոստումնալից բնաստեղծ համարվող Գրիշան այդպես էլ իր հիշատակն անմահացող ոչ մի գիրք չթողեց ընթերցողի սեղանին:

Համալսարանն ավարտելուց մի քանի տարի անց հանգրվանելով իր հայրենի Կյորու (Ձորաշեն) գյուղում ու ստանձնելով դպրոցի տնօրենի պաշտոնը՝ Գրիշա Մանուկարյանը հետագա տարիներին լուրջ նվիրումով չգբաղվեց պոեզիայով, և կարելի է միանշանակ ասել, որ իր բանաստեղծական տաղանդը հիմնականում վատնեց իր ժողովրդի հետ ապրած օրերը պարզապես գեղեցիկ անցկացնելու կլիա:

Բնությունը շոյալ էր գտնվել նրա հանդեպ ևս և արտաքին բարեմասնություններով օժտելու հարցում. բարձր հասակը, խրոխտ կեցվածքը, առնականությունն ու գեղեցիկ տեսքը բայրոկյան հմայք հաղորդելով նրա կերպարին՝ ցանկացած միջավայրում միանգամից ընդունելի էին դարձնում նրան, նախքան նրա խոհուն և լայնասիրտ եությունը կհասցներ իր

մարդկային լույսն ու ջերմությունը տարածել շրջապատի վրա: Նրա խիղճով լեցուն հոգին բոլորին կենտրոնախ տրամադրություն էր ներարկում, իսկ լիաթոք, վարակիչ ծիծաղն ի գորու էր լինում նույնիսկ չար մարդկանց գիւնաթափելով՝ բարեհամբույր դարձնել...

Հասարակ ժողովուրդն անվերապահորեն սիրում էր նրան՝ որպես իր հարագատ զավակի, իսկ խորհրդային իշխանությունների ներկայացուցիչները, գնահատելով նրա գիտելիքներն ու կազմակերպչական ունակությունները, միաժամանակ հիացմունքով և անկեղծ ակնածանքով էին նայում պատանի տարիքում Հայրենական մեծ պատերազմի դաժան մարտերով անցած նրա հաղթական կերպարին: Ի դեպ, նրա «Հինեյ» բանաստեղծությունը, որ պատերազմի բովով անցած գինվորի և գինվորական շինելի մտերմության մի էպիկական հուզիչ ասք է, պատերազմի մասին գրված լավագույն ստեղծագործություններից մեկն էր համարվում այն տարիներին, որն այսօր էլ թե՛ իր բանաստեղծական գրավորությունն է պահպանել, թե՛ իր արդիական հնչեղությունը:

### ՇԻՆԵԼ

*Երբ ներխուժեց թշնամին  
Հայրենական հողը մեր,  
Ընկերացանք նույն պահին,  
Նվիրական իմ շինել:*

*Քեզ հետ տարա ցավ ու վիշտ  
Բախումներում այն դաժան,  
Եվ կռվի մեջ եղանք միշտ  
Մտերիմ ու անբաժան:*

*Թե ընկել եմ վիրավոր  
Ես թշնամու գնդակից,  
Նախ, գնդակը թունակվոր,  
Քեզ է կպել, հետո՛ ինձ:*

*Եղել ես տաք անկողին,  
Երբ բաց դաշտում եմ քնել,  
Սառնությունը թաց հողի  
Քեզ վրա ես ընդունել:*

*Եվ տխրել ես, սիրելիս,  
Մեր նահանջը հիշելով,  
Իսկ թշնամուն հարթելիս  
Ծափ ես տվել փեշերով:*

*Չինվորիս հետ մտերիմ  
Դու կռվել ես բացի պես,  
Կրծքիդ թափած արյունն իմ  
Հբանշան է կարծես:*

*Եվ կլինենք իրար հետ՝  
Միշտ անբաժան իրարից,  
Մինչ վերանան առհավետ  
Պատերազմներն աշխարհից:*

Առանց վարանելու կարելի է ասել, որ դժվարին պատանեկան տարիներ տեսնելուց, երիտասարդ տարիքում պատերազմի սարսափների միջով անցնելուց և ուսումնառության կիսաբառ տարիներն անցկացնելուց հետո, երեսուն տարեկանից սկսած, նրա կյանքը երջանկի աստղի տակ ծնվածի լուսապակով էր շրջանակվել: Եվ գուցե հենց հասարակության բոլոր խավերի կողմից գնահատված լինելու հանգամանքն ու արժեքավոր ասպրելու հաճելի ինտրիգան էր հիմնական պատճառը, որ ևս, կարելի է ասել, ինչ-որ առումով տոնական թմբիկի մեջ անցկացրեց ստեղծագործելու իր լավագույն տարիները և միայն դեպքից դեպ փորձեց լրջորեն անդրադառնալ իսկական պոեզիային:

2006թ. Հայաստանի գրողների միության Սյունիքի մասնաճյուղի նախագահ Եղիկ Չոհրաբյանը մեր հանդիպումներից մեկում

կիսվելով ինձ հետ իր մի սրտառու մտահղացմամբ՝ ասաց, որ ցանկանում է Գրիշա Մանուկարյանի բանաստեղծություններից գունե մի փունջ առանձին գրքույկով լույս ընծայել և այդ նպատակով «Չանգեզուր» թերթի արխիվներից փորձում է դուրս բերել ժամանակին այնտեղ տպագրված նրա բոլոր ստեղծագործությունները: Ու ասաց, որ թերթերից հանված բանաստեղծությունների մի մասը որոշակի խմբագրումների կարիք է ունենալու, քանի որ դրանցում այն տարիների կոմունիստական գաղափարախոսությամբ ներծծված, այսօրվա ընթերցողի համար անընկալելի բառեր կան, որոնք ցանկալի կլինեն, որ փոխարինվեն: Եվ ինձից խնդրեց, որ այդ աշխատանքը ես կատարեմ: Ես տվեցի իմ համաձայնությունը, ինքս էլ իմ հերթին «պարտավորեցնելով» նրան, որ արխիվային որոնումներում հնարավորինս ուշադիր լինի և փորձի գտնել ևս և Գրիշա Մանուկարյանի «Չանգեզուրյան լեգենդներ»-ի շարքը: Նման լեգենդների գոյության փաստի մասին ևս ոչ մի տեղեկություն չուներ: Հավաստիացրի նրան, որ այդ լեգենդները հաստատ գոյություն ունեն, և որ պատանի տարիքում դրանց առաջին ու վերջին անգամ ես հանդիպել եմ հենց «Չանգեզուր» թերթում:

Որոշ ժամանակ անց Եղիկը ոգևորված հայտնեց, որ չորս լեգենդ ներկայացնող «Չանգեզուրյան լեգենդներ» շարքը գտել է («Չանգեզուր» թերթի 1969թ. 127, 149 և 1970թ. 19, 37 համարներում) և երկու տասնյակից ավելի բանաստեղծությունների հետ դրանք հանձնեց ինձ:

Լեգենդների խմբագրման մեջ խորանալով՝ տեսա, որ միայն թեթևակի խմբագրումներ անելով գործը գլուխ չի գալիս, որ առավել հիմնավոր միջամտությունների կարիք է զգացվում, որովհետև լեգենդները թեև էպիկական շնչով տոգորված, գեղարվեստական արժանիքներ ունեցող ստեղծագործություններ էին, սակայն որոշ հատվածներում հսպճեպ ու անփույթ էին շարադրված: Նման դրվագները միանշանակ թուլացնում էին լեգենդների գեղարվեստականությունն ու էպիկական հնչեղությունը:

Լեգենդների խմբագրումներն արժանավայել կերպով ավարտին հասցնելու համար ստիպված էի առավել հիմնավոր միջամտություններ անելու իրավունք վերապահել ինձ և տարաբնույթ փոփոխություններ իրականացնել. որոշակի տողեր շտկել եմ՝ հուզականությանն ու ասելիքին չօգնող բառերը փոխարինելով նորերով, խճճվածություններ պարունակող որոշ տներ հստակեցրել եմ՝ բանաստեղծական պարզ հնչեղություն հարդրելով դրանց, շփոթեցնող ընկալումների հնարավորությունը բացառելու նպատակով որոշ պատկերներ հղկել եմ, որոշ պատկերներ էլ փոխել եմ՝ ելնելով տվյալ պատումի հոգեբանական ընթացքի տրամաբանությունից: «Հարսնածոր» լեգենդում հարկադրված եմ եղել սյուժեի փոփոխություն կատարել և իրեն ձորը նետած աղջկան կենդանի թողնել, քանի որ, ըստ ժողովրդական ավանդազրույցի, ևս չի մահացել: Այդ պատճառով «Հարսնածոր» լեգենդում մեկ բառատող ավելեցրել եմ: Իսկ որոշ տներ ինքնակապտակ համարելով՝ այդ լեգենդներից հանել եմ...

Մի խոսքով՝ ինչ կարգի փոփոխություններ էլ իրականացրել եմ, դրանք բոլորն էլ միտված են եղել ծառայելու լեգենդներն ավելի կատարյալ ու հնչեղ դարձնելու նպատակին...

Հարկ է համարում՝ վերաստին հիշատակել իր կյանքը նախանձելի մոլեռանդությամբ գրչին նվիրաբերած Եղիկ Չոհրաբյանի անունը: Նրա նախանձեղությունը պատճառ հանդիսացավ, որ գտնվեցին «Չանգեզուրյան լեգենդները»:

**ՏԻԳՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Վ մի կերպ նմանեցրի նկարին:  
– Նման է, – դատավճռի պես ասաց բարտաշ Արմին ու խոստացավ պատվեր տալ ինձ:

Երկու օր անց ունեցա առաջին պատվիրատու...

– Ճաշատեղան, գրասեղան, լուսամուկի ... Ստեղծագործությունից ստեղծագործություն ինչպե՞ս է առաջանում մտահղացումը: – Հարցում եմ Միհրանին:

– Որևէ բան ստեղծելուց առաջ պատկերը գալիս է աչքիս առաջ: Դետալ, նախշ, ֆրագ... Կողքիս հում փայտակույթ է՝ կոճղ: Պատրաստելիք աշխատանքս տեսնում եմ այդ կոճղի մեջ:

Փայտափորագրությունը մեկի համար տառապանք է, մյուսի համար՝ հաճույք: Ես սիրում եմ իմ գործը: Չնայած թրջակառու եմ, բայց ինձ երիտասարդ եմ զգում: Ամեն օր մի բան եմ ստեղծում: Այնպիսի վիճակում եմ, որ եթե հանկարծ ասեն՝ այլևս որևէ բան չգիտի փորագրես, կգերադասեմ մեռնել:

Մի քանի օր առաջ մեր տուն եկավ եղբորս հարսը. «Հուպար շան, մայրս բաժակի հավաքածուներից մեկի կոթը կտորել է, կսարքե՞ս»: Ապակե կոթը որքան ամուր կպցնես, մի օր կպոկվի: Կոթով փայտե պատյան սարքեցի, բաժակը մտցրի մեջը, նվիրեցի իրեն: Չնայ, մի քանի օր հետո մի ուրիշ բաժակ ձեռքին եկավ, թե՛ «Հուպար, էն սարքածը շատ լավն

էր: Ի՞նչ կլինի, սա էլ սարքես»: «Ստեղծել այն է, որ հավաքածուի բոլոր բաժակներին փայտե պատյան հագնես», - կատակեցի ես:

...Իմ գործերի գույնգործոցն եմ ուզում ստեղծել: Ինչու... Վաղամեռիկ երգիչ ու կոմպոզիտոր Հայկոյին չէի ճանաչում, նրա երգերին ծանոթ չէի: Գործերս թողած, կյանված լսում էի մի աստվածային երաժշտություն: Երաժշտությունը Բաֆֆու «Խաչագողի հիշատակարանը» վեպի հիման վրա ստեղծված ֆիլմի համար Հայկոյի ստեղծագործած հայտնի երաժշտությունն էր... Հիմա հաճախ եմ աշխատում այդ երաժշտության տակ:

Ներկայումս բրենդային «ՆՈՅ» կոնյակի տափաշի օրինակով մի պատյան եմ քան-

դակում: Մի կողմին պիտի լինի Հայկոյի փայտափորագրված դիմաքանդակը: Քանի որ ստեղծագործությունս այդ երգի ազդեցությամբ է ստեղծված, քանդակն էլ «Խաչագողի հիշատակարան»-ի մոտիվներով պիտի լինի: Մտածում եմ՝ «Ո՞րք պիտի քանդակեմ Զավոր Պետրոսյան կամ Մուրադյան»: Մինչ փորձում էի կերպար որոնել, ինքս ինձ հարց տվի՝ «Ովքե՞ր են նրանք՝ մարդ, սատանա...»: Ու որոշեցի քանդակել անապատում փիլոնը գլխին մարդու և քարավանի առջևից գնացող երեխայի: Աշխատում եմ ևս ևս. Հայոց բանակին առնչվող թեմաներով...

**ՎԱՉԵ ՄՎՐՏՅԱՆ**



# Սամվել Ալեքսանյանի ելույթը Կապանում՝ հսկամական հեղափոխության 46-րդ տարեդարձին նվիրված հանդիսությունում

Իրանի Իսլամական Հանրապետության գլխավոր հյուպատոս պարոն Մորթեզա Աբեդին Վարամին Սյունիքի համայնքների հարգելի ղեկավարներ Սյունիքի հարգելի փոխմարզպետ Գոգևոր դասի պատվելի ներկայացուցիչներ

**Սյունիքի հայրենակիցներ**  
Մենք ուրախությամբ ենք մասնակցում Իրանի Իսլամական հեղափոխության 46-րդ տարեդարձին նվիրված հանդիսությանը:  
Եվ այդ կապակցությամբ մեր ողջույն ու շնորհավորանքն ենք բերել հյուպատոսության աշխատակիցներին, Իրանի Իսլամական Հանրապետության բոլոր ներկայացուցիչներին, և ի դեմս Ձեզ՝ բարենախառն ենք հղում բարեկամ Իրանի ժողովրդին:  
\*\*\*

Տոնական այս օրն առիթ է ևս մեկ անգամ հայացք ձգելու Իրանի և ընդհանրապես տարածաշրջանի համար 46 տարի առաջ տեղի ունեցած այն իրադարձությանը, որն անվանվում է Իրանի Իսլամական հեղափոխություն:  
1979 թվականի այդ իրադարձությունների արդյունքում տապալվեցին Իրանի Պահլավյան թագավորական կարգերը, միապետությունը և շահ Մուհամադ Ռեզա Փահլևիի իշխանությունը, հաստատվեց նոր վարչակարգ՝ այսպիսով Ռուսիայի և ԽՍՀՄ-ի գլխավորությամբ:  
Երկրում անցկացվեց հանրաքվե, որի արդյունքում 1979 թ. ապրիլի 1-ին Իրանը հռչակվեց Իսլամական Հանրապետություն:  
\*\*\*

Իսլամական հեղափոխության ուշագրավ արդյունքներից մեկն ազգային փոքրամասնությունների հանդեպ պետական ուշադրությունը և հոգածությունը նոր մակարդակի բարձրացնելն էր:  
Ավելի ընդգծվեց բրիտանական սրբավայրերի և ընդհանրապես բրիտանական արժեքների հանդեպ պետական հոգածությունը:  
Իսլամական կառավարությունում փոքրամասնություններն ունեցան լիարժեք ապահովվածություն, ունեցան իրենց պատգամավորները խորհրդարանում, պետությունը պարտավորվեց պահել ու պահպանել ազգային փոքրամասնությունների կրոնական և հասարակական կառույցները:  
\*\*\*

**Իրանի Իսլամական հեղափոխության**



**հետևանքները մեզ համար չափազանց կարևոր էին և շարունակում են մնալ կարևոր հատկապես արտաքին քաղաքական տեսակետից:**  
Այդ առումով հետևյալը կուզենայինք ասել:  
1991 թ. սեպտեմբերի 21-ին՝ Խորհրդային

Միության փլուզումից հետո, հայ ժողովրդի կամքով վերականգնվեց հայոց անկախ պետությունը:  
Իրանի Իսլամական Հանրապետությունն առաջին երկրներից էր, որ պաշտոնապես ճանաչեց Հայաստանի անկախ պետականությունը:

Դրանից հետո հայ-իրանական բարեկամությունը նոր փուլ թևակոխեց:  
Փորձենք այդ ամենը դիտարկել սյունիքյան պատուհանից՝ մի քանի օրինակով:  
1992 թ. մայիսի 6-ին Մեդրու Ագարակ բաղաձայնի դիմաց բացվեց ժամանակավոր ևավակամուրջը (պոնտոնային կամուրջը), որը դարձավ հույսի յուրօրինակ կամուրջ, կյանքի ճանապարհ շրջափակման մեջ հայտնված Հայաստանի Հանրապետության համար:  
Յետագայում զգացվեց ավելի հզոր կամրջի կարիք, որի շինարարությունն ավարտվեց 1995 թ. դեկտեմբերին:  
**Հայ-իրանական տարիների համագործակցության արդյունք էր Կապանում Իրանի Իսլամական Հանրապետության գլխավոր հյուպատոսության բացումը 2022 թ. հոկտեմբերի 21-ին, որով նորովի կարևորվեց Սյունիքի քաղաքական ու ռազմավարական դերն ու նշանակությունը:**

Այսօր պատեհ ենք համարում հակիրճ անդրադառնալ գլխավոր հյուպատոս պարոն Մորթեզա Աբեդին Վարամինի մարդկային, դիվանագիտական նկարագրին, որը միայն դրվատանքի է արժանի:  
Նրա ջանքերով հյուպատոսությունը վերածվեց հայ-իրանական բարեկամության դրոշակակրի կամ առաջապահի:  
Նրա գործունեության շնորհիվ Իրանի Իսլամական Հանրապետությունը մեզ համար դարձավ առավել հարազատ և հուսալի:  
Նա հասցրեց ինտեգրվել մեր երկրամասի հանրային և մշակութային առօրյային ու մեր կողքին լինել բոլոր փորձությունների ժամանակ, որն ապրեցինք վերջին երկու-երեք տարում:  
Տոնական օրվա կապակցությամբ առանձնահատուկ հարգանք ենք ընծայում Ձեզ՝ պարոն հյուպատոս, ու մաղթում հաջողություններ հայ-իրանական հարաբերությունների զարգացման գործում:  
Մենք կարող ենք երկար թվարկումներ անել, թե հյուպատոսության հիմնումից ի վեր ինչ ծրագրեր են իրականացվել և իրականացվում Սյունիքում, բայց դրա կարիքը չկա, քանզի ամեն ինչ մեր աչքի առջև է:  
Կուզենայինք կարևորել հատկապես Հյուսիս-հարավ մայրուղու Ագարակ-Քաջարան հատվածի կառուցումը, որին մոտ մեկ տարի առաջ ձեռնամուխ եղան Իրանի շինարարները, ինչը և բարեհաջող ընթացքի մեջ է:  
\*\*\*

**Հայերս, դեռևս մեր պատմության արշալույսին, ամենաբազմազան շփումներ ենք ունեցել հարևան երկրների ու ժողովուրդների հետ: Սակայն հայ ժողովրդին առավել մոտ են եղել Իրանն ու Իրանական ժողովուրդը՝ և՛ աշխարհապական, և՛ հոգևոր-մշակութային առումներով:**  
Մի քանի դիտարկում միայն մեր տարածաշրջանի մասով:  
Ընդդեմ թուրք նվաճողների մղվող ազատագրական պատերազմներում պարսկական պետությունը քանիցս գորավիզ է եղել սյունեցիներիս՝ նպաստելով ազգային մեր իղձերի իրականացմանը:  
18-րդ դարասկզբին, օրինակ, Իրանը միակ երկիրն էր, որ փաստորեն ճանաչեց Սյունիքի անկախությունը, որն իրականություն էր դարձել Դավիթ Բեկի գլխավորած ազատագրական պատերազմի շնորհիվ:  
Կամ 1921 թ. հուլիսին Լեռնահայաստանի Սպարապետ Գարեգին Լժդեհը՝ իր զինակիցներով, ապաստան գտավ բարեկամ Իրանում:  
Ուրիշ օրինակ. 17-րդ դարասկզբին (1609 թ.) Իրանի արքայական Իրամանով Քաջաթաղի մեյիթ Հայկազնը մեծ իրավունքներ ստացավ Սյունիքում, ինչի շնորհիվ, կարելի է ասել, ապահովվեց մեր երկրամասի կիսաանկախ վիճակն ու անվտանգությունը պատմության դժվարագույն այդ հանգրվանում:  
\*\*\*

**Տոնական այս հանդիպումը տեղի է ունենում տարածաշրջանի համար բախտորոշ ժամանակաշրջանում: Եվ օրվա խորհուրդը խախտած չենք լինի, եթե որոշ նկատառումներ հայտնենք այդ առնչությամբ: Հակառակ պարագայում մեր խոսքը հեռու կլինի անկեղծությունից:**  
Վերջին շրջանում, կարծեք, տարածաշրջանում նոր ստատուս քվե է ձևավորվում:  
Իհարկե, շատ կուզենայինք, որ մեր ժողովուրդը ճիշտ կողմնորոշվեր աշ-





# Կավճուտ բնակավայրի և մի հիմնախնդիր լուծվեց

Քաջարան համայնքի Լեռնաձորի Կավճուտ բնակավայրը խմելու ջուր ստացավ: Տասնամյակներ ի վեր գյուղը խմելու և ոռոգման ջրի սուր խնդիր ուներ: Կյանքի կոչվեց մի ծրագիր, որ իրականություն

դարձավ Հայաստանի Հանրապետությունում ճապոնիայի դեսպանատան և Քաջարանի համայնքապետարանի համագործակցության շնորհիվ:

Յունվարի 29-ին Սյունիքի մարզպետարանում տեղի ունեցած հանդիպումից հետո ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպան պարոն Աոկի Յուտական այցելեց Քաջարան: Համայնքապետարանում անկեղծ զրույց կայացավ երկու կողմի համագործակցության շուրջ:

«Անհամբերությամբ սպասում եմ, որ ժամանեմ Կավճուտ, խմեմ այդ ջուրը, տեսնեմ մեր ծրագրի արդյունքը», – ասաց ճապոնիայի դեսպանը:

Կավճուտցիները հավաքված էին Արման Միքայելյանեց տան բակում, որտեղ ծորակ էր տեղադրված: Իսկ մինչ այդ նոր կառուցված ճանապարհով հավաքվածները բարձրացան դեպի օրվա կարգավորման ջրամբար և բլուրացման կայան: Դրանց մուտքը երիզող ծառերից կտրեցին Քաջարանի համայնքապետ Մանվել Փարամազյանն ու ճապոնիայի դեսպանը, որից հետո ծանոթացան կատարված աշխատանքներին:

«Չուրջ կյանք է, դուք մեր բնակավայրին նոր կյանք պարզեցիք», – ասում են կավճուտցիները:

Աղանդերի սեղանի շուրջ եղան շնորհավորանքներ և բարեմաղթանքներ: Համայնքապետ Մանվել Փարամազյանը հայտնեց, որ օրակարգում են Կավճուտի ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատումը և փոքրիկ պուրակի կառուցումը:

Սա ՀՀ-ում ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպանի երկրորդ այցն էր Սյունիքի մարզ, և նկատելի լրա տրամադրությունը, վստահաբար կարելի էր ենթադրել՝ տպավորված է այցից:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ  
29.01.2025

# Հարցազրույց Մեղրի համայնքի ղեկավար Խաչատուր Անդրեասյանի հետ

Մեղրի համայնքի առջև ծառայած խնդիրների լուծումը, այնտեղ իրականացվող ծրագրերը, նաև մեղրեցիների մտահոգությունները շարունակում են մնալ «Սյունյաց Երկիր» պարբերականի ուշադրության կենտրոնում: Փետրվարի 5-ին հանդիպեցինք համայնքի ղեկավար Խաչատուր Անդրեասյանին և փորձեցինք մեզ հետաքրքրող մի քանի հարցի պատասխան ստանալ:

– **Պարոն Անդրեասյան, վերջին օրերին հայաստանյան մամուլը, նաև Հայաստանով հետաքրքրվող միջազգային կենտրոնները, փորձագիտական շրջանակները քննարկում են ԱՄՆ պետդեպի՝ այսպես կոչված գաղտնագերծումները՝ կապված 1998-99 թթ. տեղի ունեցած հայ-ադրբեջանական բանակցությունների, որոնց առանցքում եղել է Մեղրին Արցախի դիմաց Ադրբեջանին հանձնելու հարցը:**

**Ենթադրում եմ, որ այդ «գաղտնագերծումը» մեծ արձագանք է գտել նաև Մեղրու տարածաշրջանում: Կուզե՞նք իմանալ Ձեր, ինչպես և մեղրեցիների վերաբերմունքն այդ «գաղտնագերծմանը» և Մեղրու շուրջ վերստին ծավալվող խոսակցություններին:**

– Նախ՝ որևէ փաստաթուղթ կամ արձագրություն չի գաղտնագերծվել, ընդամենն ասում են՝ նման քննարկում է եղել: Բայց գործնական քայլ չի կատարվել անիտեքստային գաղափարի շուրջ, եթե, նույնիսկ, նման ծրագիր իրոք եղել է:

Չեմ պատկերացում, որ եղել է կամ կա ու կլինի մի հայ, ով իր ձեռքով նման փաստաթղթի տակ ստորագրություն կդնի, ով Մեղրու հանդեպ նման դավաճանական քայլ կկատարի: Նման թեմայով մտածելն անգամ դավաճանություն է ոչ միայն մեղրեցիների, այլև մեղրեցիների, այլև համբողջ հայ ժողովրդի հանդեպ: Մեղրիում հետևում ենք այդ թեմայի շուրջ գրուցներին...

Իհարկե, տարօրինակ է, որ 25 տարի առաջ տեղի ունեցած խոսակցությունը կրկին ջրի երես են հանում: Միևնույն մեղրեցին շատ պինդ է կանգնած իր հայրենի հողի վրա: Վախենալու, երկմտալու մեջ ընկնելու զգացողություն որևէ մեկը չունի: Ամեն մարդ իր բնական կյանքով է ապրում:

Մեղրեցին պատրաստ է, հարկ եղած դեպքում, մի բռնուցք դառնալու և տեր կանգնելու իր հայրենական տանը:

– **Որքան տեղյակ եմք՝ 2026 թվականին Մեղրին ստանձնելու և ԱԳՀ երկրների մշակութային մայրաքաղաքի դերը: Հետաքրքիր է պատրաստվում էք այդ իրադարձությանը:**

– Կարող եք վստահ լինել՝ Մեղրին արժանապատվորեն կկատարի այդ դերը: Հիմա քննարկումներ ենք անում շահագրգիռ կամ իրավասու պետական մարմինների, կազմակերպությունների հետ՝ անելիքները հստակեցնելու և գործի անցնելու համար, ժամանակ քիչ է մնացել:

– **Մեղրին, ինչպես տեսանք, բավականին ակտիվ մասնակցեց Ձմեռային համահայկական խաղերին:**

– Երեք շախմատիստ, պարային համույթի 17 սան, շատ գեղեցիկ մասնակցություն ունեցան, արժանապատվորեն ներկայացրին մեր համայնքը և պատվավոր տեղեր գրավեցին:

– **Ճանապարհին մի քանի տեղ ակառատես եղանք, թե ինչպես են իրանցի շինարարներն աշխատում Հյուսիս-հարավ մայրուղու Ագարակ-Քաջարան հատվածում:**

**Ենթադրում եմ, որ պատշաճորեն եք համագործակցում իրանցի շինարարների հետ:**

– Հյուսիս-հարավի կառուցումը համապետական, համազգային մասշտաբի իրադարձություն է, որը մեծ նշանակություն ունի նաև Մեղրու տարածաշրջանի համար:

Այդ մշտական համագործակցության մեջ ենք, աշխատանքները կատարվում են առա-

Շարունակությունը էջ 9

խարհի վերաբաժանման, սահմանների վերաձևման ներկա խառնաշփոթում: Բայց կուզենայինք նաև, որ հողս ցնդեր մի շարք գուժկան քաղաքագետների կանխատեսումները, թե իբր Իրանի Իսլամական Հանրապետությունը, ստեղծված բարդագույն իրավիճակում, կարող է և վերանայել Հայաստանի հետ ունեցած հարաբերությունները:

**Մեզ համար չափազանց կարևոր է եղել Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքականությունը հատկապես 2020 թվականի պատերազմից և 2023-ին Արցախում իրականացված հայերի ցեղասպանությունից հետո, երբ հորինված «Չանգեզուրի միջանցքի» խնդիրը դարձավ աշխարհաքաղաքական հարցերից մեկը:**

Ասել և ասում ենք՝ «Չանգեզուրի միջանցքը» խաբեական ծրագիր է և ընդդեմ Հայաստանի է:

«Չանգեզուրի միջանցքը» ոչ թե Ադրբեջանը Նախիջևանի հետ տրանսպորտային երթուղով կապելու խնդիր ունի, այլ Հայաստանը մասնատելու, արդեն իսկ անդամախտված Սյունիքը վերստին մասնատելու, Հայաստանի և Իրանի միջև հազարամյակներով գոյություն ունեցող ճանապարհը շրջափակելու, ՌԴ-ին տարածաշրջանից դուրս մղելու ստույգ նպատակ:

Իրանի Իսլամական Հանրապետությունն ամենաբարձր մակարդակով քանիցս անթույլատրելի է համարել «Չանգեզուրի միջանցքի» ստեղծումը՝ դա համարելով կարմիր գիծ Իրանի համար:

Ավելին, Իրանն առաջարկել է Ադրբեջանի և Նախիջևանի միջև հաղորդակցության այլընտրանքային տարբերակ, ինչպիսին է «Արաբսի միջանցքը»:

**Մի քանի օր է, սակայն, այդ հարցի շուրջ նոր և վստահավոր գարգացումների ենք ականատես:**

Նախ՝ «Ազատություն» ռադիոկայանը իրապարակեց ԱՄՆ պետդեպի՝ իբր գաղտնագերծված փաստաթուղթերը՝ 1998-1999 թթ. տեղի ունեցած հայ-ադրբեջանական բանակցությունների մասին, որի ընթացքում քննարկվել է Մեղրիի տարածքն Ադրբեջանին հանձնելու տարբերակը (Արցախի դիմաց):

Գաղտնագերծում կոչված այդ ներկայացումը, կարծում ենք, վկայությունն է այն բանի, որ «Չանգեզուրի միջանցքի» գլխավոր փայտատերերը նոր թափով են լծվել հորինված այդ խնդրի լուծմանը:

**Թուրանական այդ ծրագրի հարցում նոր ակտիվացումը, ըստ փորձագիտական հանրույթի, բացատրվում է պահի բացառիկությամբ, թե իբր սի-**

**րիական իրադարձություններից հետո տարածաշրջանում էականորեն թուլացել է Իրանի Իսլամական Հանրապետության դիրքերը, թե իբր Իրանն այլևս չի կարող խոչընդոտել այդ ծրագրի իրագործմանը:**

Ստեղծված իրավիճակում մեր որոշ մտահոգություններ, կարծեք, փարատվում են Հայաստանում Իրանի դեսպան պարոն Սոբհանիի փետրվարի 6-ի հայտարարությունների արդյունքում:

**Դեսպանը հայտարարեց՝ Իրանը վճռականորեն աջակցում է Հայաստանի տարածքային ամբողջականությանը:**

**Հայտարարեց նաև՝ «Միայն Իրանն է, որ աջակցում է Հայաստանին՝ դեմ լինելու այսպես կոչված «Չանգեզուրի միջանցքի» հարցում: Միայն Իրանն է, որ այս հարցում կանգնած է Հայաստանի կողքին»:**

**Մենք, անշուշտ, ողջունում ենք փաստը, որ Իրանը վերահաստատում է իր՝ Նախիջևանում որդեգրած դիրքորոշումը:**

**Ներկայումս Հայաստանի բնակչությունը ներքաշված է ապագային միտված ճանապարհի փնտրողների մեջ:**

Ոմանք երկրի ապագան տեսնում են Եվրոպական Միության և ընդհանրապես հավաքական Արևմուտքի հետ ռազմավարական հարաբերությունների մեջ:

Մենք, իհարկե, հարգում ենք մեր որոշ հայրենակիցների այդ կողմնորոշումը:

Մենք, միանշանակ, կողմնակից ենք բոլոր ժողովուրդների հետ արժանապատիվ բարեկամության, եթե, իհարկե, այդ ժողովուրդները մեզ հետ բարեկամախառն իրական մտադրություն ունեն: Ի վերջո բնության մեջ ավելի զորեղ և բաղձալի երևույթ չկա, քան ժողովուրդների բարեկամությունը:

**Միևնույն անհնար է չտեսնել, թե ինչպես ենք Արևմուտք կամ Եվրոպա պոռված ընկղմվում Թուրքիայի գիրկը: Այն պետության, որը բացեիքբաց և հպարտորեն հայտարարում է, թե ինչպես է 2020-ին հայոց Արցախը բռնազավթել: Այն պետության, որը մեզ հետ խոսում է միայն Նախապայմաններով, որն առ այսօր չի զղրում 20-րդ դարասկզբին մեր պատմական հայրենիքում գործած ցեղասպանության համար:**

Հայոց մեծերից մեկը՝ մեր հայրենակից Համո Սահյանն է պատգամում «Մենք այստեղ պիտի ապրենք ու ճախրենք»:

Այդ սկզբունքով և վճռակալությամբ էլ ապրում ենք:

**Ու բարեկամ և եղբայր ենք բոլոր**

**երկրներին ու ժողովուրդներին, որոնք պաշտպանում են մեր այս ընտրությունը, որոնք աջակցում են երկրամասի անվտանգությանը և դեմ են Սյունիքի մասնատմանը:**

**Մեզ համար հենց դա է դեպի Տաճար տանող ճանապարհը:**

**Երբևէ, մեկ այլ առիթով, ավելի հանգամանակից խոսք կասենք հայ-իրանական մշակութային առնչությունների մասին, որոնք, իսկապես, հազարամյակների պատմություն ունեն:**

Այսօր կբավարարվենք հետաքրքիր մի իրողություն հիշեցնելով:

**Սյունյաց աշխարհի նշանավոր գավակ Սեբեգե (Հարությունյանն էր այն թարգմանիչը՝ գրական անունը՝ Ումառյան), ով հայ ընթերցողի սեղանին դրեց իրանական պոեզիայի՝ համաշխարհային նշանակության ստեղծագործություններից շատերը:**

Այդքանով հանդերձ՝ Իրանի գրական-մշակութային հարստության մասին մեզ պատկերացում է տվել հանճարեղ Չարենցը՝ «Չարենց-Նամե» պոեմում, որի մի դրվագ կուզենայինք հիշել:

*Ես ծնվել եմ Մակու քաղաքում,  
Արևի տակ ոսկեդեմ, հասուն,  
Շոգ շնչի տակ Օրմուզդի թևի-*

*Թախել է արևն Իրանի  
Իմ հոգում Շիրազի վարդեր:*

Հիշենք նաև Իրանի ամենահռչկավոր և սիրված պոետ Հաֆեզի մտքերից մեկը, որի արդիականությունն անվիճելի է, թեև գրվել է յոթ դար առաջ:

Ահա...

*Հանճարն իր գնդից, Հաֆեզն իր դասից  
բացակայում են,  
Խառնաշփոթ է, ժամանակները բարդ են  
ու խորին:*

**Հարգելի ներկաներ  
Եվս մեկ անգամ շնորհավորում ենք ձեզ՝ Իսլամական հեղափոխության 46-րդ տարեդարձի կապակցությամբ, բարեկամ Իրանին ցանկանում արժանապատիվ դիմակայություն՝ առկա մարտահրավերներին, և զարգացում ու բարգավաճում:**

**Շնորհակալություն:**

**8 ՓԵՏՐՎԱՐԻ 2025 Թ.**

# Ձմեռային զորակոչ. Սյունիքն իր զավակներին ճանապարհեց հայոց բանակ

Սկզբը՝ էջ 1

Հանդիսավոր միջոցառմանը ներկա էին Սիսիան համայնքի ղեկավար Հովսեփ Առաքելյանը, Սյունիքի մարզպետի տեղակալ Հայկ Հարությունյանը, Սյունիքի մարզի զինվորական կոմիսար Վահրամ Հարությունյանը, Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի, ուժային կառույցների աշխատակիցները:

Միջոցառման ժամանակ ուղերձով է հանդես եկել Հովսեփ Առաքելյանը, ով խոսել է Հայոց բանակի անցած փառավոր ուղու մասին, ցանկացել, որ հայրենասիրության ոգով լցված նորակոչիկները լույս կերպ ընդունեն և Հարունակեն բանակաշինության ստեղծման և կայացման գործում իրենց ավագ սերնդակիցների կողմից թողած ժառանգությունը՝ ծառայությունը համարելով սրբազան առաքելություն:

**«Մաղթում եմ, որ երկու տարվա ընթացքում հաղթահարեք ձեր առջև դրված բոլոր խնդիրներն ու դժվարությունները՝ դառնալով ոգեշնչող օրինակ շրջապատի համար»**, - ելույթում նշել է համայնքի ղեկավարը:

Ելույթով են հանդես եկել նաև Սյունիքի մարզպետի տեղակալ Հայկ Հարությունյանը, Սյունիքի մարզի զինվորական կոմիսար Վահրամ Հարությունյանը, սյունեցի գրող, բանաստեղծուհի Անահիտ Դանիելյանը, Սիսիանի համայնքապետարանի աշխատակազմի Կրթության, մշակույթի, սպորտի, առողջապահության, երիտասարդության և սոցիալական հարցերի բաժնի պետ Նարա Հովհաննիսյանը:

Սիսիանն իր նորակոչիկներին բարի ճանապարհ է մաղթել զուռնա-դիովով, երգով և պարով:

**ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**  
**13.01.2025**

\*\*\*

Հայոց բանակի շարքերի թարմացման, կամ որ միևնույն է՝ ձմեռային զորակոչի շունչը նաև մարզկենտրոն Կապան հասավ:

Հունվարի 15-ին, ավանդույթի համաձայն, ձմեռային զորակոչի առաջին հավաքին նվիրված հանրահավաք տեղի ունեցավ Քարեգին Լժոճեի հուշահամալիրում:

Աննախաղեպ բազմամարդ էր հուշահամալիրի տարածքը, և տարբեր էր մարդկանց հոգեվիճակը. ոմանք հուզված էին, չէին թաքցնում արցունքները, ոմանք հպարտություն են ապրում, քանզի իրենց որդին այնքան է հասունացել, որ եկել է բանակ ճանապարհելու ժամանակը: Ռուբեն և Գրետա Դավթյան ամուսինները բանակ են ճանապարհում իրենց երրորդ թոռանը: Այն համոզմունքն ունեն, որ տղա զավակն անպատճառ պիտի ծառայի, և Հայաստան աշխարհին խաղաղություն, զինակոչիկներին՝ անփորձանք ծառայություն մաղթեցին:

Օրվա խորհրդին պատշաճոր օրինակներ խոսքեր հնչեցրին Վահանավանքի հոգևոր հովիվ տեր Ավետիք քահանայա Մարտիրոսյանը և Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցու հոգևոր հովիվ տեր Խաչատուր քահանայաջայրապետյանը:

Նկնեցին նաև ողջերթի, բարեմաղթանքի խոսքեր, ելույթներով հանդես եկան Սյունիքի մարզպետի տեղակալ Հայկ Հարությունյանը, Քաջարանի համայնքապետի առաջին տեղակալ Չոհրապ Առաքելյանը, ԵԿԿ Կապանի տարածքային բաժանմունքի հրամանատարի տեղակալ Վարդան Ստեփանյանը, Սյունիքի զինկոմ, գնդապետ Վահրամ Հարությունյանը: Նրանք հայրենիքի ապագա պաշտպաններին հորդորեցին արժանավայել ծառայել երկրին, անթերի կատարել մարտական առաջադրանքները, հանդուրժողական և ներողամիտ լինել զինակից ընկերների հանդեպ:

Հանրահավաքն ավարտվեց Կապանի մշակույթի կենտրոնի երգչուհիների՝ հայրենասիրական երգերի կատարումներով:

Օրինակներ, բարեմաղթանքի խոսքերի ներքո 49 զինակոչիկ՝ Կապան և Քաջարան համայնքներից, մեկնեցին հանրապետական հավաքակայան՝ փոխարինելու զինծառայությունն ավարտող իրենց ավագ ընկերներին:

**ՎԱՅՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ**

\*\*\*

Հունվարի 20-ին՝ ՀՀ ՊՆ Սյունիքի մարզի զինվորական կոմիսարիատի Մեղրիի բաժանմունքից պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեկնեցին Մեղրիի համայնքից առաջին նորակոչիկները:

Չորակոչի առթիվ կազմակերպված միջոցառմանը մասնակցում էին Սյունիքի մարզպետի տեղակալ Հայկ Հարությունյանը, Մեղրիի համայնքի ղեկավար Խաչատուր Անդրեասյանը, Մեղրիի համայնքի հոգևոր հովիվ, արժանապատիվ Տեր Ռաֆայել քահանա Խաչիկյանը, ուժային կառույցների, իրավապահ մարմինների ներկայացուցիչներ, պաշտոնատար այլ անձինք, զինակոչիկների հարազատներ ու ընկերներ:

Ներկաներին ողջույնի և ոգեշնչման խոսքեր հղեց համայնքի ղեկավար Խ. Անդրեասյանը: Նա նորակոչիկներին մաղթեց անփորձանք ծառայություն և բարի վերադարձ հայրենի օջախներ:

Տեր Ռաֆայել քահանա Խաչիկյանն օրհնության խոսք հղեց նորակոչիկներին: Ներկաները միասնական աղոթք բարձրացրին զինվորների խաղաղ և անփորձանք ծառայության համար:

**ՄԵՂՐԻԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

\*\*\*

Հայոց ազգային բանակի կազմավորման օրը Սյունիքի մարզի բազմաթիվ բնակավայրերի բնակիչների համար կրկնակի տոն էր.



այդ օրը կայացան նրանց նորակոչիկ որդիների ու եղբայրների բանակ ճանապարհելու հանդիսավոր արարողություններ:

Հաջորդ օրը՝ հունվարի 29-ին, սյունեցի նորակոչիկները՝ պետության կայացման գործում բանակի դերի կարևորության գիտակցումով, Գործիսում մասնակցեցին Սյունիքի մարզի ձմեռային զորակոչի ամփոփմանը:

Ի դեպ, Սյունիքի զինկոմ, գնդապետ Վահրամ Հարությունյանը նոր և լավ ավանդույթի սկիզբ է դրել՝ նորակոչիկին բարձր տրամադրությամբ բանակ ճանապարհելը չպետք է լինի միայն առաջին զորակոչի «մենաշնորհը»: Նրա նախաձեռնությամբ՝ ամեն զորակոչի ժամանակ Գորիսի, Սիսիանի, Կապանի և Մեղրիի զինկոմիսարիատների զինծառայողների մասնակցությամբ, տեղի մշակույթի կենտրոնների հետ մեկտեղ, հայրենասիրական երաժշտության հնչյունների ներքո, տեղի են ունենում նորակոչիկներին բանակ ճանապարհելու հանդիսավոր արարողություններ, որտեղ ելույթներ են ունենում Սյունիքի զինկոմը, հոգևորականները, պատեստագորայիններ, մտավորականներ, նորակոչիկների հարազատներ:

Մեծ բազմության առաջ հնչեցվող խոսքն ուսանելի և ազդու էր՝ հայ երիտասարդը ծառայելով հայկական բանակում, պատվախնդրորեն կատարելով իր զինվորական պարտականությունը, մեծ ներդրում է ունենում բանակաշինության գործում, կատարում երկրի անվտանգության ապահովմանն ու հզորացմանն ուղղված գիտակից, վճռական քայլեր...

Մշակութային միջոցառումների կազմակերպիչ Նելլի Արզումանյանը, ով յուրաքանչյուր միջոցառմանը ներկայանում է նոր ասելիքով, այս անգամ շեշտը դրեց բանակ զորակոչվող հայորդիներին ևճոճեցիան ոգով դաստիարակության, բանակ, պետություն և երկիր կառուցելու գիտակցության ձևավորման, դրանում յուրաքանչյուրի ունենալիք դերակատարության վրա:

Սյունիքի զինկոմ, գնդապետ Վահրամ Հարությունյանը նորակոչիկներին շնորհավորեց հայրենիքի պաշտպանի դժվարին, բայց պատասխանատու դերը ստանձնելու համար՝ նրանց մաղթելով բարի ծառայություն, բարի վերադարձ: Նկատելով իր ելույթի ընթացքում բանակ զորակոչվող որդիների՝ հրաժեշ-

տից առաջ ծնողների թաց աչքերը, զինկոմն ասաց՝ հուզմունքը նաև տղամարդու համար է, բայց բոլորս պետք է հպարտորեն բանակ ճանապարհենք մեր որդիներին: Չինկոմը ծնողներին հորդորեց նաև՝ իրենց զավակների ծառայության ընթացքում ծագող հարցերի դեպքում դիմել Սյունիքի զինկոմիսարիատ, որն իր լիազորությունների սահմաններում անպայման դրական ընթացք կտա դրանց լուծմանը:

Նորակոչիկ Միեր Մինասյանի պապը՝ Գագիկ Պողոսյանը, բանակ մեկնողներին՝ իբրև հայրական խրատ, բարի խորհուրդներ տվեց՝ մաղթելով, որ գերազանց ծառայություն իրականացնեն ու բարով վերադառնան հարազատ օջախներ:

Հարազատների հետ հրաժեշտից հետո՝ ավտոբուսում, նորակոչիկներն իմ բարի ծառայության բարեմաղթանքին ի պատասխան, վեր պարզեցին բռունցքները՝ ի նշան հայի հզոր կամքի, ոգու ու հավատքի: Նրանց լուսավոր հայացքները հավաստում էին՝ միասին մենք կարող ենք ապահովել մեր երկրի անվտանգությունը:

**ՎԱՉԵ ՄԿՐՏՅԱՆ**

# Հարցազրույց Մեղրի համայնքի ղեկավար Խաչատուր Անդրեասյանի հետ

Սկզբը՝ էջ 7

շանցիկ տեմպերով, շինաշխատանքներում ընդգրկված են նաև տեղացիներ, առայժմ մոտ 30 հոգի:

– Դեռևս Կարեն Դեմիրճյանի ժամանակներից Մեղրու վերաբերյալ կառավարության առանձին որոշումներ են կայացվել, ասել է՝ տարբերակված քաղաքականություն է իրականացվել՝ Մեղրին ամրապնդելու հարցում: Հիմա, կարծեք, գյուղական որոշ բնակավայրերի վաղվա օրը, մեղմ ասած, հույս չի ներշնչում:

– Ցավոք, այդպիսի գյուղեր ունենք՝ Կուրիս, Գուրեմիս, Կայեր, Վահրավար, Վանք... Դրանց մի մասում վաղուց բնակչություն չկա, իբրև ամառանոց են ծառայում:

– Ձեզ հետ հանդիպելուց առաջ տեղեկացանք, որ 2025 թ. Մեղրու համայնքային բյուջեն կրկնապատկվել է՝ նախորդ տարվա համեմատ: Դա, իսկապես, ողջունելի է:

– Ընթացիկ տարում համայնքային բյուջեն 2 մլրդ 480 մլն դրամ է, որը, իրոք, անսխալաբեր է:

Լավագույն դեպքում ունեցել ենք 1 մլրդ 200 մլն դրամ պարունակող համայնքային բյուջե:

Եկամտի աղբյուրներում կատարված փոփոխություններից մեկը կապված է հանքարդյունաբերության նպատակով օգտագործվող հողերի վարձակալության գների փոփոխման հետ:

Հանքավայրերի շահագործումից ստացվող շահույթներից նույնպես, գործող օրենսդրության համաձայն, համայնքային բյուջեին հատկացումներ կկատարվեն:

Սերտորեն համագործակցում ենք նաև Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատի, ինչպես և ՀԴՄԿ-ի հետ, համատեղ ծրագրեր ունենք:

Այդ ընկերությունները նույնպես շահագործված են մեր համայնքի առջև ծառայած խնդիրների լուծման հարցում:

– Հիմա՝ սուբվենցիոն ծրագրերի մա-



**Հանքավայրերի շահագործումից ստացվող շահույթներից նույնպես, գործող օրենսդրության համաձայն, համայնքային բյուջեին հատկացումներ կկատարվեն:**

**սին, ի՞նչ նախագծեր իրականացվեցին 2024 թվականին:**

– Կատարվել է ութ բազմաբնակարան շենքի տանիքների ու վերելակների նորոգում և արդիականացում. դա շատ կարևոր, վաղուց սպասված ծրագիր էր:

Առաջիկա օրերին կկազմակերպենք դրա ավարտին նվիրված միջոցառում:

Աշխատանքներն իրականացրել է երևանյան մի կազմակերպություն՝ մրցույթով հաղթած, բարեխիղճ աշխատանք է կատարել, գոհ ենք:

Ծրագրի արժեքը 219 մլն 518 հազար դրամ էր, որից 131 մլն 710 հազարը կառավարության ներդրումն էր, մնացածը՝ համայնքի:

– Իսկ հատկացված են ընթացիկ

**տարվա անելիքները՝ սուբվենցիոն ծրագրերի առումով:**

– Առայժմ հաստատված չեն 2025 թվականի ծրագրերը, բայց ակնկալում ենք 1 մլրդ 200 մլն դրամ արժողությամբ ծրագրերի իրականացում:

Նախատեսվում են և՛ բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում, և՛ Ագարակ քաղաքի փողոցների հիմնանորոգում:

– **Պարոն Անդրեասյան, շնորհակալություն՝ զրույցի համար, Ձեզ՝ հաջողություններ համայնքային խնդիրների լուծման ճանապարհով:**

**ՉՈՐՈՅՑԸ՝ ԱՐՄՍԻՆԵ ՄԱՐԿՈՅԱՆԻ ԵՎ ՄԱՐԻ ՆԱՎԱՍՏԱՆԻՅԱՆԻ**

# Կառավարությունը հավանություն տվեց ԵՄ-ին Հայաստանի անդամակցության գործընթաց սկսելու մասին օրինագծին

Սկզբը՝ էջ 1

Միջոցառում: Կառավարությունը, բացի դրական դիրքորոշումից, առաջարկել է նախագծում կատարել որոշ փոփոխություններ՝ համապատասխանեցնելով այն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին: Առաջարկվում է նախագծի բովանդակային մասը ներկայացնել որպես հոդվածներ, վերաշարադրել որոշ արտահայտություններ և հստակեցնել օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետը:

«Պարոն վարչապետ, Դուք հայտարարել էիք, որ Հայաստանի Հանրապետությունը պատրաստ է մոտ լինել Եվրոպական միությանն անդամակցության միությանն անդամակցության միությունը դա հնարավոր կհամարի: Մենք այդ հնարավոր համարելու նշաններն էլ ենք տեսել. նկատի ունեն և՛ վիզաների ազատակցության մեկնարկը, և՛ մի շարք այլ գործիքներ, որոնք արդեն բնակարկվում են կամ կիրառվում են մեր և Եվրոպական միության միջև: Ելնելով այս հանգամանակներից մենք առաջարկում ենք դրական դիրքորոշում արտահայտել», – եզրակացրեց Միջոցառումը:

Քաղաքական և հասարակական մի շարք նախաձեռնություններ ստորագրահավաք են անցկացրել Հայաստանի կողմից Եվրամիությանն անդամակցելու գործընթաց սկսելու հարցով: Նրանց հաջողվել է հավաքել 60 հազար ստորագրություն՝ անհրաժեշտ 50 հազարի փոխարեն, և հարցը ներկայացվել է խորհրդարանի բնակարանները:

09.01.2025

# Հայաստանի ճանապարհը դեպի վերականգնվող էներգետիկա և տնտեսական առաջընթաց

Սկզբը՝ էջ 1

Արևային և քամու էներգետիկայի էքսպոնենցիալ աճը ու Հինաստանի համընդհանուր էլեկտրաֆիկացումը նոր էներգետիկ հեղափոխություն է, թվով 3-րդը առաջին արդյունաբերական հեղափոխությունից ի վեր: Հինաստանը ապացուցում է, որ ոչ միայն արդյունաբերական զբոսընթաց է, այլև նոր էներգետիկ հեղափոխության առաջամարտիկը ու վերականգնվող էներգետիկայի անվերազանցելի արդյունաբերական մենաշնորհի ստեղծողը: Հինաստանի կառավարությունը երկիրը տանում է դեպի կանաչ էներգետիկա և ներմուծվող հանածո էներգետիկայի անկախացմանը: Այդ մոտեցումը չինական «անվտանգություն և առատություն» (security and abundance) տնտեսական ընդհանուր քաղաքականության մի մասն է: Հինաստանի այս ծրագրերի իրագործման արագությունը ֆանտաստիկ է: Այնտեղ տարեկան ավելի շատ ընդհանուր հզորությամբ քամու և արևային կայաններ են շահագործման հանձնվում, քան մնացած բոլոր երկրներում միասին վերցված: Նոր ավտոմեքենաների կեսից ավելին արդեն էլեկտրական են: Բոլոր երկրները ձգտելու են հետևել Հինաստանի օրինակին, որովհետև էներգետիկ այս հեթոթևան հեղափոխությունը վերականգնվող էներգետիկային այլընտրանք չի թողնելու: Իհարկե, այդ երկրները իրենց էներգետիկ անվտանգության համապարհի հաջողության տարբեր աստիճաններ և տարբեր արագություն են գրանցելու:

Այս օրինակները ցույց են տալիս, որ էներգետիկան ավելի է, քան պարզապես ռեսուրս. այն կարող է ազգային զբոսընթացի, անվտանգության և ազդեցության գործիք լինել: էներգետիկ ռեսուրսների ճիշտ կառավարումը կարող է դառնալ տնտեսական առաջընթացի, ազգային անվտանգության և գլոբալ ազդեցության երաշխիք մեծ տերությունների համար և էներգետիկ անկախության ու տնտեսական զարգացման հիմք՝ փոքր երկրների համար: Ի դեպ, հատկանշական է, որ Հինաստանը էներգետիկ փոխակերպման համար անհրաժեշտ մատակարարման շղթան ապահովելու համար արդեն մի քանի տասնամյակ ընդլայնում է նաև չինական ներկայությունը հանքարդյունաբերության ոլորտում: Անցյալ տարի չինական ներդրումները համաշխարհային հանքարդյունաբերության մեջ՝ թե՛ երկրի ներսում, թե՛ ամբողջ աշխարհում անցել են 20 միլիարդ դոլարի շեմը, իսկ համաշխարհային հանքարդյունաբերական արտադրանքի արդեն մոտ 30%-ը պատկանում է չինական ընկերություններին:

Հայաստանը փոքր երկիր է, որը և՛ անհրաժեշտ ռեսուրսներ, և՛ հարուստ արևային ու հիդրոէներգետիկ ներուժ ունենալով, դեռևս բավարար չի կարողանում օգտվել դրանց հնարավորություններից: էներգետիկ համակարգը դեռ մեծապես կախված է մեկ երկրից ներկրվող գազից և այլ հանածո էներգետիկներից (բենզին, դիզելային վառելիք), ինչը ոչ միայն խոցելի է դարձնում էներգետիկ անվտանգությունը, այլև խոչընդոտում է տնտեսական կայունությանը և մեծ բնապահպանական խնդիրներ առաջացնում:

Որպես ուսանելի օրինակ հետաքրքիր է նաև Հիլին: Այն բնական էներգետիկ ռեսուրսներով հարուստ չէ և օգտագործում է իր աշխարհագրական հնարավորությունները՝ վերածվելով վերականգնվող էներգիայի հաջողված մոդելի: Այստեղ ընդհանուր էլեկտրաէներգիայի արդեն 20% արտադրվում է արևային կայանների կողմից, 14%-ը՝ քամու և 22%-ը՝ հիդրոկայանների կողմից, գրանցելով զգալի աճի տեմպեր: Հայաստանի համար Հիլիի մոդելը կարող է կիրառելի լինել՝ հաշվի առնելով երկրների նմանությունը որոշ սոցիալական, աշխարհագրական և հանքարդյունաբերական ներուժի հատկանիշներով: Բազային նմանություն ունենալով՝ մենք Հիլիից նույնպես դեռ շատ հեռ ենք: Օրինակ, թե՛ Հայաստանում հիդրոկայանների արտադրանքի ծավալի տեսակարար կշիռը համեմատելի է Հիլիի ցուցանիշների հետ, ապա արևային էներգիայի առումով երկու անգամ հեռ ենք, իսկ քամու էներգիան մեր երկրում գրեթե չի օգտագործվում: Ի տարբերություն Հիլիի՝ էներգիայի կուտակիչների ծրագրեր մեզանում ընդհանրապես գոյություն չունեն:

Հատկանշական է, որ ի տարբերություն Հիլիի և Հինաստանի, Հայաստանը, ցավոք, այս պահին լիարժեք չի օգտվում նաև իր հանքարդյունաբերական ռեսուրսային պոտենցիալից, ինչն անուղղակիորեն կարող էր նաև հնարավորությունների բացել էներգետիկ փոխակերպման ոլորտում ներդրումների համար:

Հայաստանը կարող է և պետք է օգտագործի իր արևային, քամու և հիդրոէներգետիկ ներուժը՝ զուգակցելով պետական, մասնավոր և միջազգային ջանքերը: Միայն Սևանի նման բնական ու կատարյալ հիդրոկուտակիչ ունենալով՝ Հայաստանն արդեն ահռելի առավելություն ունի իր հարևանների նկատմամբ, որը կարող է լիարժեք կայունություն ապահովել նոր էներգետիկ համակարգի համար:

Վերականգնվող էներգիայի զարգացումը ոչ միայն կնվազեցնի երկրի էներգետիկ կախվածությունը, այլև կդառնա տնտեսական զարգացման և տարածաշրջանային առաջատարության հիմք: Տարածաշրջանային և համաշխարհային դերակատարումը բարձրացնելու հավանություն ունեցող երկիրը պետք է առաջարկելու ինչ-որ բան ունենա: Դա կարող է լինել կանաչ, մատչելի էլեկտրաէներգիան, որի մեծ կարիք ունի Եվրոպական աշխարհամասը: Ի՞նչ կիրառական քայլեր են արվել այս ուղղությամբ: Արդյո՞ք ունենք նոր էներգետիկա և անվտանգ ու առատ տնտեսություն ստեղծելու համարձակություն և հանձնառությունը:

Այսօր Հայաստանը կանգնած է պատմական ընտրության առաջ. շարունակել կախված մնալ ներմուծվող հանածո վառելիքից, թե՛ օգտվել իր բնական ռեսուրսներից՝ դառնալով կայուն, ինքնաբավ և էներգետիկ անկախ երկիր, ունենալով առատ, էժան, անվտանգ ու անկախ էներգիա ոչ միայն ներքին սպառման, այլև արտահանման համար: Պատմությունը ցույց է տալիս, որ էներգետիկան կարող է ոչ միայն տնտեսության շարժիչ ուժ, այլև ազգային անվտանգության և տարածաշրջանային ազդեցության կարևոր բաղադրիչ դառնալ: Ժամանակն է, որ Հայաստանը լիարժեք օգտվի այս հնարավորություններից՝ վերականգնվող էներգիան դարձնելով իր զարգացման հիմքը:

BANKS.AM 15.01.2025

# Կապանի օդանավակայանը 2024-ին սպասարկել է 1365 ուղևորի

Կապանի «Սյունիք» օդանավակայանը 2024 թվականին սպասարկել է 1365 ուղևորի: Այս մասին «Յետքը» տեղեկացել է 33 քաղաքացիայի կոմիտեից, որն իր հերթին տվյալները վերցրել է «Չվարթոնգ» օդանավակայանից:

Լ կատենք, որ ներկա պահին «Սյունիք» կապը բացառապես «Չվարթոնգ»-ի հետ է, այլ կերպ ասած՝ իրականացվում են միայն Երևան-Կապան-Երևան չվերթեր: Չնայած «Սյունիք» ունի քաղաքացիայի միջազգային կազմակերպություններից՝ IATA-ից ու ICAO-ից ստացած համապատասխան կողեր՝ YUK և UDCK, 2023-ի օգոստոսից մինչ օրս ընդունում և ճանապարհում է բա-

ցառապես 33 ներքին թռիչքներ: Յիշեցնենք, որ 2023 թ. օգոստոս-դեկտեմբեր ամիսներին Կապանի օդանավակայանից օգտվել էր 207 ուղևոր: Նախորդ տարի «Սյունիքից» օգտվողների ամենամեծ թիվը գրանցվել է սեպտեմբերին, նաև՝ օգոստոսին, երբ ամսական ուղևորների թիվն անցել է 200-ի շեմը: Սեպտեմբերյան աճը պատահական չէ, քանի որ 2023-ի օգոստոսից մինչև 2024-ի օգոստոս Երևան-Կապան-Երևան չվերթերն իրականացվում էին ամեն երկուշաբթի և ուրբաթ, իսկ 2024-ի սեպտեմբերից ավելացան նաև չորեքշաբթի օրերը: Ընդ որում՝ նշված 1365 ուղևորից 660-ը Երևանից են մեկնել Կապան, իսկ 705-ը Կապանից ժամանել են Երևան:

Երևան-Կապան-Երևան թռիչքների միջոցով բեռնափոխադրում (բեռ + փոստ) մի իրականացվել է: Ինչ վերաբերում է «Սյունիքի» թռիչքներին ու վայրէջքներին, ապա 2024-ին դրանք եղել են 160-ը՝ 80-ական թռիչք և վայրէջք: Ամենաշատ թռիչքներն ու վայրէջքները գրանցվել են դեկտեմբերին: Սա էլ ունի իր բացատրությունը: Նախ՝ եղանակը բարենպաստ է եղել, և դեկտեմբերին (որը երկար ամիս է) չվերթեր են իրականացվել գրեթե բոլոր երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերին, բացառություն է եղել միայն դեկտեմբերի 2-ը (երկուշաբթի): Սյուն կողմից՝ Երևանյան «Նովյեյր» ավիաընկերությունը, որը Երևան-Կապան-Երևան չվերթերի օպերատորն է,

2025-ի տարեմուտին և հունվարի առաջին օրերին սովորական չվացուցակից ավելի շատ թռիչքներ է կատարել: Յիշեցնենք, որ Երևանի ու Կապանի միջև ավիահաղորդակցության մեջ որոշիչ դեր ունի եղանակը: Պատճառն այն է, որ դեպի Կապան չվերթերը կատարվում են վիզուալ թռիչքների կանոններով (VFR), երբ պարտադիր պայման է բարենպաստ եղանակը: Ներկա պահին քայլեր են ձեռնարկվում՝ նաև սարքավորումներով թռիչքներ (IFR) իրականացնելու համար, ինչը հնարավորություն կտա Կապան մեկնել և այնտեղից վերադառնալ նաև ոչ այնքան բարենպաստ եղանակային պայմաններում: Գաղափար կա նաև «Սյունիքը» դարձնել միջազգային օդանավակայան: Մասնագետների կարծիքով՝ Կապանը կարող է կապող օղակ դառնալ Երևանի ու, օրինակ, Թավրիզի միջև՝ ներգրավելով մասնավորապես, իրանցի գրասաշրջիկներին: Այս պարագայում «Սյունիքում» վստահաբար կաճի թե՛ թռիչքների, թե՛ ուղևորների քանակը:

14.01.2025



# «Մասնագիտական կողմնորոշում էքսպո-2025»

Հունվարի 29-ին Սյունիքում առաջին անգամ անցկացվեց «Մասնագիտական կողմնորոշում էքսպո-2025» միջոցառումը:

Սյունիքի մարզպետի աշխատակազմի նախաձեռնությամբ Կապանում մեկ հարկի տակ էին հավաքվել Մեղրի, Քաջարան, Կապան համայնքների բարձր դասարանների աշակերտները, մարզի նախնական, միջին մասնագիտական և բարձրագույն 19 ուսումնական հաստատության, մարզի հետ մշտապես համագործակցող ռազմական ուսումնական հաստատությունների, գործատուների, այլընտրանքային կամ շարունակական կրթությունն առաջարկող կառույցների ներկայացուցիչներ: Ներկա էին մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը, 33 ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության պետ, ոստիկանության պետի տեղակալ, գնդապետ Արթուր Խուրդիսյանը, մարզպետի աշխատակազմի, 33 ՆԳՆ ոստիկանության աշխատակիցներ, այլ հյուրեր: Էքսպոյի մասնակիցները տաղավարներում սովորողներին էին ներկայացնում իրենց ուսումնական հաստատությունների կամ կազմակերպությունների հնարավորություններն ու առավելությունները՝ նպաստելով ճիշտ մասնագիտական կողմնորոշմանը: Նշենք, որ 2024-2025 ուստարվանից «Մասնագիտական կողմնորոշումը» դպրոցներում դարձել է պարտադիր խմբակ:

Միջոցառման հանդիսավոր մասում ներկաներին ողջունեց Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը. նա շնորհակալություն հայտնեց էքսպոյի կազմակերպիչներին, մասնակիցներին ու հյուրերին և կարևորեց միջոցառումը՝ աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը նպաստելու առումով: Ելույթ ունեցավ Պարեկային ծառայության պետ գնդապետ Ա. Խուրդիսյանը, նա պատասխանեց նաև աշակերտների հարցերին: Ներկաներին իրենց մասնագիտական կողմնորոշման մասին պատմեցին Կապանի ՈՍ ԻՊՈՒՄ-ի հարցից աշակերտ Մարիաննա

Ավթանդիյանը, Գորիսի ՊՅ-ի ուսանողական գիտական ընկերության նախագահ Մանե Արջունցը: Միջոցառման հյուրերի համար գեղարվեստական կատարումով հանդես եկան «Սյունիք» պարային համույթի սաները՝ ներկայացնելով տարբեր մասնագիտությունների կերպարներ: Այնուհետև էքսպոյի մասնակիցները շրջեցին ներկայացված տաղավարներով՝ իրազեկվելով յուրաքանչյուրի առաջարկների և հնարավորությունների մասին:



### ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆ. հայացք անցյալին ու ներկային



## Ալեքսանդր Գրիբոյեդով. հայ ժողովրդի մեծ բարեկամը

Գրիբոյեդովը ծնվել է Մոսկվայում, ազնվականական ապահովված ընտանիքում: Նրա նախահայր Յան Գրիբովսկին (լեհերեն Jan Grzybowski) տասնյոթերորդ դարի սկզբում Լեհաստանից տեղափոխվել է Ռուսաստան: Գրիբովսկի ազգանունը՝ Գրիբոյեդով, Գրիբովսկի ազգանվան յուրօրինակ թարգմանությունն է: Ալեքսեյ Միխայիլովիչի թագավորության օրոք այդ տոհմի նշանավոր ներկայացուցիչ Ֆյոդոր Ալիմի Գրիբոյեդովը դալի էր, 1649 թվականի հանրահայտ օրենսգրքի հինգ կազմողներից մեկը: Գրոդի հայրը պաշտոնաթող սեկունդ-մայոր Սերգեյ Իվանովիչ Գրիբոյեդովն (1761-1814) է, մայրը՝ Անաստասիա Ֆյոդորովնան (1768-1839):

Յարգատների վկայությամբ՝ Ալեքսանդրը փոքր ժամանակ շատ ուշիմ է արտակարգ զարգացած երեխա էր: Վկայություններ կան, որ նա հեղափոխական գաղափարներով հայտնի նշանավոր գրող Ալեքսանդր Ռադիշչևի գարմիկի թոռն է (դա հանգամանորեն թաքցնում էր ինքը՝ դրամատուրգը): Վեց տարեկանում ազատ տիրապետում էր երեք օտար լեզուների, պատանեկության տարիներին՝ արդեն վեց լեզվի, մասնավորաբար՝ կատարելապես տիրապետում էր անգլերենին, ֆրանսերենին, գերմաներենին, իտալերենին, հին հունարենին:

1803 թվականին նա ընդունվեց Մոսկվայի համալսարանի ազնվականական պանսիոնը, երեք տարի անց՝ Մոսկվայի պետական համալսարանի բանասիրության բաժինը: 1808 թվականին ավարտեց այն՝ ստանալով բանասիրական գիտությունների թեկնածուի կոչում, ապա ընդունվեց փիլիսոփայության ֆակուլտետի բարոյաբանական /իրավաբանական/ բաժինը, 1810 թվականին ստացավ իրավական գիտությունների թեկնածուի աստիճան, բայց դարձյալ մնաց համալսարանում, այս անգամ արդեն՝ մաթեմատիկա և բնական գիտություններ ուսումնասիրելու նպատակով:

1812 թվականի սեպտեմբերի 8-ին կոռնետ Գրիբոյեդովը հիվանդացավ և մինչև նոյեմբերի մեկը մնաց վաղիմիրում՝ չկարողանալով հասնել իր նշանակման վայրը: 1812 թվականի ամռանը, Գայրենական պատերազմի ժամանակ, երբ թշնամին ներխուժեց Ռուսաստան, նա մտավ կոմս Պյոտոր Իվանովիչ Սալտիկովի մոսկովյան հուսարական կամավորական գունդը: Այստեղ նա ընկավ «լավագույն ազնվականական ընտանիքների գավակ՝ երիտասարդ կոռնետների» ընկերակցության մեջ: Իսկ այդ «լավագույն ազնվականական ընտանիքների» թվում էին իշխան Գոլիցինը, կոմս Տոլստոյը, կոմս Եֆիմովսկին, Ալյաբևը,

Շերեմետևը... Իր կյանքի այդ շրջանի մասին Գրիբոյեդովը հետագայում նամակներից մեկում գրել է. «Այդ ընկերակցության մեջ ես անցկացրի ընդամենը չորս ամիս, բայց արդեն չորրորդ տարին է՝ չեմ կարողանում ուղիղ, շիտակ ճանապարհի վրա ընկնել»:

Մինչև 1815 թվականը Գրիբոյեդովը ծառայում է հեծելազորի գեներալ Կոլոգրիվովի զորամասում: Իր առաջին գրական փորձերը նա կատարել է 1814 թվականին: Դրանցից են՝ «Երիտասարդ ամուսինները» կատակերգությունը, որը թարգմանություն էր ֆրանսերենից, «Նամակ Բրեստ -Լիտովսկից»՝ իրատարակչին», «Յեծելագորային ռեզերվների մասին»

ակնարկը: Այդ գործերը նրան ճանաչում բերեցին:

1815 թվականին Գրիբոյեդովը եկավ Պետերբուրգ, որտեղ ծանոթացավ «Յայրենիքի որդին» ամսագրի իրատարակիչ Ն. Ի. Գրեչի և հայտնի թատերագիր Ն. Ի. Խմելնիցկու հետ:

1816 թվականի գարնանը սկսեց գրողը թողեց գինվորական ծառայությունը, իսկ արդեն ամռանը լույս ընծայեց մի հոդված Բյուրգերի «Լենորա» բալլադի ռուսերեն ազատ թարգմանության վերլուծության մասին: Գրեչը այս ժամանակաշրջանում էլ Գրիբոյեդովի անունը հայտնվում է մասնական «Լե ամիս ռեյունիս» (Միացյալ ընկերներ) օթյակի իսկական անդամների ցուցակում: 1817 թվականի սկզբին Գրիբոյեդովը դարձավ մասնական «Ղու Բիեն» օթյակի հիմնադիրներից մեկը: Ամռանը անցավ դիվանագիտական ծառայության՝ զբաղեցնելով արտաքին գործերի կոլեգիայի նախնազային բարտուղարի պաշտոնը: Իր կյանքի այդ շրջանում գրողը ծանոթանում է Ալեքսանդր Պուշկինի, Վ. Կյուխելբեկերի հետ, գրում «Թատրոն» բանաստեղծությունը (ի պատասխան «Երիտասարդ ամուսինները» կատակերգության զագոսկիայան քննադա-

Ալեքսանդր Գրիբոյեդովի  
հուշարձանը Երևանում, 1975թ.,  
ճարտարապետ՝ Սպարտակ  
Կևտեղցյան, բանդակագործ՝  
Յովհաննես Բեջախյան



տության): Տարբեր թատերագիրների հեղինակակցությամբ գրում է նաև «Ուսանողը», «Ձևացված անհավատարմություն», «Ամուսնացած հարսնացուն» կատակերգությունները:

1818 թվականին Գրիբոյեդովը, մերժելով ԱՄՆ-ում՝ ռուսական դիվանագիտական առաքելությամբ հանդես գալու առաջարկը, աշխատանքի նշանակվեց Պարսկաստանում ռուսական դիվանագիտական ծառայությունում՝ որպես քարտուղար: Նախքան Թեհրան մեկնելը ավարտեց աշխատանքն իր «Ինտերմեդիայի փորձեր» երկի վրա: Օգոստոսին ճանապարհ ընկնելով դեպի իր ծառայության վայրը, մի շաբթե քաղաքներում կարճատև կանգառներ կատարելով, երկու ամսում հասավ Մոզդոկ, այստեղից էլ, դարձյալ ոչ տևական դադարից հետո, շարժվեց դեպի Թիֆլիս: Ընդ որում՝ ընթացքում հանգամանորեն գրի էր առնում իր ճամփորդական տպավորությունները: 1819 թվականի սկզբին գրեց հեգնական «Նամակ իրատարակչին՝ Թիֆլիսից», իրագործեց իր առաջին գործողումը՝ շահական պալատ: Սեպտեմբերին՝ պարսկական գերությունից իր գործարարած ջանքերի շնորհիվ ազատություն ստացած ռուս զինվորների շուկատի և փախստականների, գաղթականների մի մեծ խմբի գլուխ անցած՝ Թավրիզից ճանապարհ ընկավ դեպի Թիֆլիս: Մոտ մեկ ամիս տևած այս «ճանապարհորդության» առանձին դրվագներ նա նկարագրել է իր օրագրերում, «Վազինի պատմածը», «Անախուրյան կարանտին» ստեղծագործություններում:

1821 թվականը Գրիբոյեդովն անցկացրեց Վրաստանում: Այդտեղ և այդ ժամանակ սկսեց գրել իր գլուխգործոցը՝ «Խելքից պատուհաս» թատերաերկը, մտերմացավ զինվորական ծառայությունը Վրաստանում շարունակելու եկած Վիլիելմ Կյուխելբեկերի հետ: 1822 թվականի փետրվարից Գրիբոյեդովը ծառայության անցավ Կովկասում ռուսական զորքերի իրամասնատար գեներալ Ալեքսեյ Երմոլովի շտաբում՝ որպես դիվանագիտական մասի բարտուղար: Ամենայն հավանականությամբ՝ այդ տարում է գրել «1812 թվական» դրաման՝ Նապոլեոնյան բանակի նկատմամբ ռուսների տարած հաղթանակի մասին: 1823 թվականի սկզբին նա ժամանակավորապես թողեց ծառայությունը, վերադարձավ հայրենիք, երկուսուկես տարի ապրեց Մոսկվայում, Պետերբուրգում, Տոլյայի նահանգում, շարունակեց աշխատանքը «Խելքից պատուհաս» թատերգության վրա, գրեց նոր գործեր, այդ թվում՝ «e-moll» հանրահայտ վալսը: 1824 թվականի վերջերին դարձավ Ռուսական բանակայության սիրահարների ազատ ընկերության իսկական անդամ:

1825 թվականի մայիսին Գրիբոյեդովը, հետաձգելով Եվրոպա այցելելու մտադրության իրագործումը, վերադարձավ իր ծառայության վայրը՝ Կովկաս: Սովորեց արաբերեն, թուրքերեն, վրացերեն և պարսկերեն: Պարսկերենի նրա առաջին ուսուցիչը Միրզա Ջաֆար Թոփչիբաշևն էր:

Աշխատեց Գյոթեի «Ֆաուստ» ողբերգության «Նախաբան թատրոնում» հատվածի ազատ թարգմանության վրա, Բուլգարիի ինդրանթով ծանոթագրություններ կազմեց Դ. Ցիկովիկի «Արտասովոր արկածներ և ճամփորդություններ»-ի համար: Վրաստանից վերադառնալիս այցելեց Կիև, որտեղ հանդիպեց հեղափոխական ընդհատակի հետագա դեկաբրիտ ակնառու գործիչներ Մ. Բեստուժև-Ռյումինին, Ա. Մուռավյովին, Ս. Մուռավյով-Ապոստոլին և Ս. Տրուբեցկոյին: Միաժամանակ ապրեց Դրիմում՝ հաճախ այցելելով իր վաղեմի ընկերոջ՝ Ա. Չավադովսկու առանձնատուն: Կարծիք կա, որ հենց հարավում ունեցած հանդիպումների տպավորության տակ է գրել «Պոլովցի այրերի երկխոսությունը»:

Կովկաս վերադառնալու պես, ոգեշնչված գեներալ Վեյսամիտովի արշավանքով, Գրիբոյեդովը գրեց «Գիշատիչները Չեգեմում» հայտնի բանաստեղծությունը:

1826 թվականի հունվարին Գրոզնայա ամրոցում նա ձերբակալվեց՝ կասկածվելով դեկաբրիստների հարելու մեջ, և տարվեց Պետերբուրգ, բայց հետաքննությամբ չկարողացան գաղտնի ընկերությանը նրա պատկանելության ապացույցներ գտնել: Մոտ հինգ ամիս քննության տակ պահելուց հետո ստիպված էին ազատ արձակել, բայց դեռ մի որոշ ժամանակ շարունակեցին գաղտնի հետևել նրան:

1826 թվականի սեպտեմբերին Գրիբոյեդովը վերադարձավ Վրաստան

# Համահայկական ձմեռային 2-րդ խաղերը Ջերմուկում



Գորիսի «Մեծ Հայք» պարային ստուդիայի պարուհի Սյունե Ստեփանյանը

խաղերին մասնակցում էին 18 պետության 88 բաղադր 1348 մարզիկ:

Սյունիքի մարզը ներկայացնում էին Կապանի, Սիսիանի, Քաջարանի, Գորիսի և Մեղրիի 47 մարզիկ, որից 16-ը Մեղրի համայնքի ներկայացուցիչներն էին:

Համահայկական ձմեռային խաղերի մարզաձևերն են՝ հոկեյ, դահուկավազք, լեռնադահուկային սպորտ, սնուբորդ, շախմատ, սպորտային պարեր:

\*\*\*

Համահայկական ձմեռային 2-րդ խաղերին մասնակցեց Կապանի շախմատի թիմը՝ երեք հոգուց բաղկացած:

Ձմեռային խաղերին մասնակցում էին 150 շախմատիստ: Մրցաշարն անցկացվեց արագ շախմատի շվեյցարական մրցակարգով՝ 9 փուլից:

Կապանցի մասնակիցներից Ալեն Դահրամանյանը 9 հնարավոր միավորից վաստակեց 6 միավոր՝ զբաղեցնելով 21-րդ տեղը, Ալեն Գևորգյանը՝ 5.5 միավոր, Գագիկ Մանուչարյանը՝ 5 միավոր:

\*\*\*

Ջերմուկում համահայկական ձմեռային երկրորդ խաղերին Սիսիանը մասնակցեց սպորտային պարեր մարզաձևով:

Պատվիրակությունը մասնակցեց բացման արարողությանը, այնուհետև 14 մարզիկ՝ Արման Դավթյանի ղեկավարությամբ, մասնակցեցին բաց առաջնությանը և համահայկական խաղերին՝ հաղթանակ նվաճելու ձգտումով:

Միջազգային մրցաշարի 20՝ 1-ին տեղը Սիսիանին էր: **«Մա մեծ ցուցանիշ է, միևնույն ժամանակ հաճելի, երբ 20 անգամ հնչում է Սիսիանի անունը և 20 անգամ 1-ին պատվոհարթակը նվաճում են սիսիանցի փոքրիկները»**,- ուրախությամբ պատմում էր Արման Դավթյանը:

Այնուհետև արձանագրվել է 12՝ 2-րդ տեղ, 6՝ 3-րդ տեղ:

Այսպիսով, բոլոր սաներն ընդհանուր հաշվարկով մրցանակային տեղեր են զբաղեցրել, ինչն էլ խոսում է լուրջ ու նվիրված աշխատանքի մասին:

Համահայկական խաղերում վաղուց Սի-

սիանը ոչ մի արդուք չէր ունեցել, և, ի հպարտություն, 10 մարզիկ հաղթահարեց 1/8 և 1/4 փուլերը:

Նման արդյունքի հասնելը հեշտ չէր 77 համայնքի մարզիկների հետ մրցման շրջանակում, այդ փուլերը հաղթահարելն արդեն իսկ մեծ նվաճում էր:

Եզրափակիչ փուլում պայքարեցին 3 մարզիկ, որոնցից Սոնա Ավագյանը գրավեց 6-րդ, Անահիտ Քարամյանը՝ 4-րդ, իսկ Նանե Հարությունյանը՝ 3-րդ պատվավոր և մրցանակային տեղերը:

Փոքրիկ պարուհի Նանե Սիսիանի հաղթանակն անունը հնչեցնողն էր, ով ապացուցեց՝ Սիսիանը կարող է ամենաթեժ մրցասպարեզում հաղթանակով դուրս գալ:

\*\*\*

Գորիսի «Մեծ Հայք» պարային ստուդիայի պարուհի Սյունե Ստեփանյանը մասնակցել է Ջերմուկում Համահայկական ձմեռային 2-րդ խաղերի շրջանակում անցկացվող «Բարեկամության կամուրջ» սպորտային-պարահանդեսային պարերի միջազգային բաց առաջնությանը և սոլո-բրոնզ կարգում զբաղեցրել 2-րդ պատվավոր տեղը՝ արժանանալով արծաթե մեդալի, մյուս կարգերում՝ զավթաթերի:

Սյունե Ստեփանյանը Համահայկական ամառային 8-րդ խաղերի բրոնզե մեդալակիր է և 2023 թվականին Գյումրիում անցկացվող մրցույթում պատվով ներկայացրել էր Գորիսը՝ բերելով միակ օլիմպիական մեդալը:

Տարիներ շարունակ սպորտային պարերի միջազգային և հանրապետական տարբեր փառատոներում նա զբաղեցրել էր մրցանակային տեղեր, արժանացել զավթաթերի:

Առաջնությանը Ջերմուկում մասնակցել է «Մեծ Հայք» պարային ստուդիայի ստեղծագործական թիմը՝ գեղարվեստական ղեկավար Համլետ Իսախանյանի գլխավորությամբ:

\*\*\*

Համահայկական ձմեռային 2-րդ խաղերին Քաջարան համայնքից մասնակցել է 3 մարզիկ՝ շախմատ մարզաձևից (Արմեն Խաչատրյան, Նարեկ Ստեփանյան, Արման Կոստանյան):

# Ալեքսանդր Գրիբոյեդով. հայ ժողովրդի մեծ բարեկամը

Սկզբը՝ էջ 11

դովը վերադարձավ Թիֆլիս՝ շարունակելու դիվանագիտական գործունեությունը: Մասնակցեց Ռուսաստանի համար շահավետ Թուրքմենչայի պայմանագրի կնքմանը, դրա բնօրինակը տարավ Պետերբուրգ, Նշանակվեց Ռուսաստանի մինիստր-ռեզիդենտ /դեսպան/ Պարսկաստանում: Նշանակման վայր գնալու ճանապարհին մի քանի ամիս մնաց Թիֆլիսում, 1828 թվականի օգոստոսի 22-ին պատկերվեց իշխանուհի Նինա ճավճավաձեի հետ, որի հետ նրան բախտ վիճակվեց ապրելու ընդամենը մի քանի շաբաթ: 1829 թվականի հունվարի 30-ին Գրիբոյեդովը, դեսպանատան 37 այլ աշխատակիցների հետ, մոլեռանդ մուսուլմանների խառնամբոխի ձեռքով զազևաբար սպանվեց Թեհրանում, ուր մեկնել էին՝ ներկայաևալու Ֆաթի Ալի շահին: Նրա՝ անճանաչելիության աստիճան այլանդակված դիակը երկու հայ եզասայլով հասցրին Թիֆլիս: Հայաստանով անցնելիս նրանց հանդիպեց բանաստեղծ Ալեքսանդր Պուշկինը, այն լեռնանցքում, որը հետագայում վերջինիս անունով կոչվեց Պուշկինյան: Լեռնանցքում այդ հանդիպման առթիվ հուշադրուր է տեղադրված:

Գրիբոյեդովին հուղարկավորեցին Մթած-միսդա սարի վրա՝ Սուրբ Դավիթ եկեղեցուն կից քարայրում: 100 տարի անց, 1929 թվականին՝ Գրիբոյեդովի մահվան 100-ամյակի կապակցությամբ Պարսկաստանում, սպանության վայրում, իշխանությունների նախաձեռնությամբ պաշտոնապես բացվել է Մթած-միսդա (պանթենոն):

Դիվանագիտական սկանդալը հարթելու նպատակով շահը Պետերբուրգ ուղարկեց իր թոռին՝ բազում թանկարժեք նվերներով: Դրանց մեջ էր նաև Նշանավոր «Շահ» ադամանդը, որը մի ժամանակ զարդարել էր մեծ մոզոլների գահը:

Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս» չափածո կատակերգությունը, իրավամբ, ռուսական թատերգության ու պոեզիայի գագաթներից է համարվում: Գրված լինելով աֆորիստիկ ոճով՝ ժողովրդականացված տասնյակ մեքքերումների տեսքով այն տարածվել է երկրով մեկ: Դեռ նախքան տպագրվելը՝ ունեցել է շուրջ քառասուն հազար ձեռագիր ընդօրինակումներ՝ գաղտնի սփռվելով Ռուսաստանի ողջ լայնությամբ: Ռուս գրականագետները արդարացիորեն նշում են. **«Ռուսական իրականության մեջ դա առաջին դեպքն էր, երբ գրականությանը համարձակորեն միարժեքում էր քաղաքականության մեջ»:** Շատերն են պաշտպանում այն տեսակետը, որ Գրիբոյեդովի այդ ստեղծագործությունը **«թուրք էր՝ նետված այսպես կոչված՝ բարձր հասարակության դեմքին»:**

«Խելքից պատուհաս» կատակերգությունը առաջին անգամ բեմադրվել է Երևանում՝ բազմաթիվ պարսիկներից 1828 թվականին ազատագրած ռուսական զորքի սպաների ուժերով:

**Ասվածին ավելացնենք՝ 1828-30 թթ. մեր ժողովրդի հայրենադարձությունը կազմակերպել են Ալեքսանդր Գրիբոյեդովը և Ամենայն հայոց կաթողիկոս Ներսես Աշտարակեցին, որը կարող է լինել խոսակցության առանձին կյուբ:**

**ԿՈՐԵԼ Է** Կապանի բժշկական ուսումնարանի 1993 թ. «Քույրական գործ» մասնագիտության շրջանավարտ Հովհաննես Գավրուշայի Հովհաննիսյանի դիպլոմը՝ ՊՏ-1, N 408290: Համարել անվավեր:



**Սյունյաց երկիր**  
ՀԻՆԱՆՈՒՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԿՊԱՏԱՍԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Ե 2003Թ. ՀՈՎՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:  
**Գլխավոր խմբագիր՝ ՍԱՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:  
(+374 91) 45 90 47  
(+374 77) 45 90 47  
syuniacyerkir@mail.ru  
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Կյուբերը ներկայացնել մեքենագիր վիճակում:  
«ԳՐՎԱԾՂ – ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում

տպագրվող կյուբերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:  
Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: Թ Նշանի տակ տպագրվում են գովազդային կյուբեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «ԳԻՆԴ-ՏՊԱՐԱՆ» ՍՊԸ-ում: Հասցեն՝ 0074, Երևան, Բագրատույնյաց փող., 70ա շենք  
Շավաղ՝ 3 տպագրական մամուլ: Տպաբանակը՝ 1010, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 12.02.2025թ.: